



<<Հայ երիտասարդի կյանքի սցենարի կազմման  
առանձնահատկությունները՝ տնտեսական  
միավորումներին ՀՀ հնարավոր անդամակցության  
պայմաններում>>  
զեկույց

**Հեղինակներ՝**

Գ. Բեյբուրյան

Ռ. Աղաջանյան

**Մենթոր՝**

հ.գ.թ., դոցենտ Դ. Հայրապետյան

**Փորձագետ՝**

հ.գ.թ., դոցենտ Ն. Խաչատրյան

*Սույն հետազոտության մեջ տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակը Գոհար Բեյբուրյանը և Ռոզա Աղաջանյանն են, որոնք էլ միայն պատասխանատու են նյութի բովանդակության համար: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի կամ նրա խորհրդի կողմից, հետևաբար չեն ներկայացնում Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն հետազոտության բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի տեսակետներին: Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ դրամաշնորհ N18733*

## Բովանդակություն

Ներածություն	0
Իրավիճակի վերլուծություն. ՀՀ սոցիալ-քաղաքական ենթատեքստ/պայմաններ և ապագայի կազմակերպման միտումներ երիտասարդների շրջանում	0
Հիմնախնդրի սահմանում և հետազոտական խնդիրներ	0
Կյանքի սցենար. Կազմման հիմնական առանձնահատկությունները	0
Եվրոպական Միություն (ԵՄ)	0
Եվրասիական տնտեսական ընկերակցությունը (ԵվրԱզԷՍ)	0
Հետազոտության նպատակը և խնդիրները	0
Մեթոդաբանություն	0
Հետազոտության հիմնական արդյունքները	0
Երիտասարդների նպատակները	0
Երիտասարդների բավարարվածության եվ սպասումներին համապատասխանության գնահատման վերլուծություն	0
Երիտասարդների տեղեկացվածությունը ԵՄ եվ Եվրասիական տնտեսական ընկերակցության վերաբերյալ	0
<i>Հետազոտության բովանդակային վերլուծություն</i>	0
<i>Փորձագիտական հարցման արդյունքների վերլուծություն</i>	0
<i>Եզրակացություններ</i>	0
<i>Հավելված</i>	

## Ներածություն

Յուրաքանչյուր պետության համար երիտասարդությունը շարժիչ այն ուժն է, որը մշտապես գտնվում է երկրում ընթացող զարգացումների կենտրոնում: Երիտասարդությունը հասարակության այն օղակն է, որն ակտիվ ներգրավված է կրթության, աշխատանքի, հասարակական գործունեության մեջ: Ըստ <<ՀՀ պետական քաղաքականության հայեցակարգի>> երիտասարդ են համարվում բնակչության 16-30 տարեկան ներկայացուցիչները<sup>1</sup>: Բայց հասարակության մեջ երիտասարդության տարիքի ընկալումները տարբեր են ու հաճախ դա կապված է ոչ թե քրոնոլոգիական տարիքի հետ, այլ՝ հասարակական դիրքի: Երկրի բնակչությունը անմիջականորեն կրում է իր վրա այն որոշումները, որոնք ընդունում է պետությունը իր ապագայի վերաբերյալ, հատկապես երիտասարդները, քանի որ հանդիսանալով հասարակության ակտիվ օղակը, ունեն իրենց առջև ծառայած մի շարք խնդիրներ՝ կրթություն ստանալ, աշխատել, ընտանիք կազմել, ընդհանուր առմամբ՝ կյանքի պլանավորում: Այսինքն, երիտասարդությունը այն ակտիվ օղակն է, որի առջև հասարակությունը դնում է մի շարք սոցիալական խնդիրներ: Այս խնդիրներից կախված յուրաքանչյուր երիտասարդ ստեղծում է կյանքի իր մոդելը:

Լինելով Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ովքեր գտնվում են կրթական պրոցեսում՝ ականատես լինելով ծավալվող բուռն քննարկումներին, իրարամերժ կարծիքներին, որոնք հաճախ փաստում են անտեղյակության կամ ոչ համապատասխան իմացության մասին, գտնում ենք անհրաժեշտ անդրադարձ կատարել ՀՀ հնարավոր անդամակցության դեպքում ապագայի տեսլականի խնդրին: Մա հնարավորություն կտա հասկանալու երիտասարդության շրջանում նման կարծիքների, պատկերացումների ձևավորման հիմքերը, պատճառները, որոնք էլ ուղղակիորեն անդրադառնում են նրանց հետագա կյանքի կազմման, սցենարի մշակման վրա:

Շատերին թվում է, որ երիտասարդների՝ օր օրի աճող ըմբոստության, երկրից հեռանալու պատճառներն ակնհայտ են: Բայց դրանք չենք կարող որպես համոզիչ հանգամանք կամ հիմք ընդունել, քանի դեռ ապացուցված չեն: Հետևաբար, մենք մեր առջև խնդիր ենք դրել հասկանալ երկրի ներկայիս սոցիալ-տնտեսական այն

<sup>1</sup> [Youth Events Holding Center, Youth Studies Institute. The Issues of Youth Employment in the RA. Yerevan. 2013. 12 p.](#)

զարգացումները և փոփոխությունները, որոնք կարող են ազդեցություն ունենալ երիտասարդների կյանքի սցենարի կազմման վրա:

## **Իրավիճակի վերլուծություն. ՀՀ սոցիալ-քաղաքական ենթատեքստ/պայմաններ և ապագայի կազմակերպման միտումներ երիտասարդների շրջանում**

Վերջին շրջանում երիտասարդությունը քննարկումների, բանավեճերի, ցույցերի, վերլուծությունների միջոցով մշտապես անդրադառնում է երկրում տիրող սոցիալ-տնտեսական վիճակին: Մեկնաբանությունները տարբեր են՝ երբեմն հիմնավորված, իսկ շատ հաճախ՝ ուղղակի արտահայտում են իրենց վերաբերմունքը՝ զուգակցված անվստահության, վիրավորվածության, ճնշվածության, ապահովության զգացման բացակայության կամ վտանգման հետ: Հետևաբար, վերը թվարկված հիմնահարցերը, մեր երկրում օր օրի աճող արտագաղթի ցուցանիշը, որտեղ զգալի մասը երիտասարդներն են, հաստատում են առաջադրվող խնդրի արդիականությունը: Համաձայն «Հայկական ժամանակ» պարբերականի՝ 2013 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Հայաստանից մեկնել է 1 միլիոն 888 հազար 165 մարդ, ժամանել՝ 1 միլիոն 780 160 մարդ: Արդյունքում, երկիր չվերադարձողների թիվը կազմել է 108 հազար 5 մարդ: Միգրանտների 73.1 տոկոսը մեկնում է Ռուսաստանի Դաշնություն, 7.9 տոկոսը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 4.4 տոկոսը՝ Ուկրաինա, 4.4 տոկոսը՝ այլ երկրներ<sup>2</sup>:

### **Հիմնախնդրի սահմանում և հետազոտական խնդիրներ**

Այս բաժնում ներկայացված են այն հիմնական հասկացությունները, որոնց անդրադարձել ենք հետազոտության ընթացքում:

#### **Կյանքի սցենար. Կազմման հիմնական առանձնահատկությունները**

Կա կարծիք, որ անձի կյանքի պլանավորումը՝ սցենարի կազմումը, սկսվում է մինչ իր ծնունդը, երբ ծնողները որոշակի կյանքի պլան են «զծում» երեխայի համար: Համաձայն հոգեբանական տրանսակցիոն տեսության, այն ենթագիտակցական է, այսինքն՝ այն«հաղորդագրությունները», որոնք երեխան ստանում է ծնողներից,

<sup>2</sup>Հայկական ժամանակ պարբերական: 108 Հազար Մարդ Չի Վերադարձել: 2013թ: Վերջին անգամ մուտք է գործվել 2015թ փետրվարին՝ <http://www.armtimes.com/hy/read/46777>

ազդում են նրա դիրքորոշումների, նպատակների և ընդհանուր առմամբ՝ կյանքի սցենարի կազմման վրա<sup>3 4</sup>:

Կյանքի սցենարի կազմման վրա ազդող հիմնական գործոններն են՝

✓ Սոցիալ-տնտեսական, հասարակական, քաղաքական իրադրությունը, ծավալվող զարգացումները

✓ Կրթական ոլորտը

✓ Ապագայի տեսլականը (երկրի և սեփական կյանքի)

✓ Արժեքային համակարգը, դրդապատճառները, ձգտումները, նպատակներն ու կարծրատիպերը

✓ Երիտասարդի պատկերացումներն ու գիտելիքները:

Մենք, որպես օբյեկտիվ գործոն, որը կարող է ազդել կյանքի սցենարի ընթացքի վրա, ենթադրաբար, առանձնացնում ենք սոցիալ-տնտեսական, հասարակական, քաղաքական իրադրությունը, պայմանները, զարգացումները: Այս աշխատանքում մենք առանձնացնում ենք տնտեսական միություններից որևէ մեկին անդամակցման փաստը, որը պայմանավորում է երկրում որոշակի սոցիալ-տնտեսական, հասարակական, քաղաքական մթնոլորտի ձևավորումը, որն էլ իր հերթին անդրադառնում է անձի վրա՝ կյանքի սցենարի կառուցման պրոցեսում:

Ցանկացած սոցիալ-տնտեսական, հասարակական, քաղաքական իրադրություն իր արձագանքն է գտնում հասարակության լայն շերտերում: Կյանքի սցենարի վրա ազդեցություն կարող են ունենալ ոչ միայն արտաքին, այլ նաև ներքին գործոնները: Որպես ներքին պայմանավորող գործոններ՝ առանձնացնում ենք անձի դրդապատճառները, հետաքրքրությունները, նպատակները, արժեհամակարգը, որոնց ուսումնասիրումը ևս մեր կողմից դիտարկվում է որպես առաջնային խնդիր: Ենթարկվելով այս գործոնների ազդեցությանը՝ անձի մոտ ձևավորվում են որոշակի պատկերացումներ, ապագայի տեսլական՝ ինչպես իր կյանքի, այնպես էլ երկրի հեռանկարի վերաբերյալ:

Կյանքի սցենարի կազմման վրա ազդում է նաև հենց ինքը՝ անձը: *Մինչև 21 տարեկանը անձի մոտ ձևավորվում է պատկերացում, թե ով է ինքը, ինչ է ցանկանում,*

<sup>3</sup> Берн Эрик. Трансакционный анализ и психотерапия. 1992. СПб: Издательство "Братство", . 224 с

<sup>4</sup> Берн Эрик. Введение в психиатрию и психоанализ для непосвященных. 1968. Минск: Попурри. 248 с.

*ինչ նպատակներ ունի: Մակայն մինչև 28 տարեկան, այդ սցենարը կարող է փոփոխվել կարևոր իրադարձությունների ազդեցության ներքո*<sup>5</sup>: Եվ, հետևաբար, կարող է կյանքի սցենարի ընթացքը (անձի միջամտությամբ, մասնավորապես, կախված իր կրթական մակարդակից, կրթության վերաբերյալ իր պատկերացումներից, արժեհամակարգից, դրդապատճառներից, նպատակներից) որոշակի հունով ընթանա: Հետևաբար, հիմնվելով տարբեր մոտեցումների և ուսումնասիրությունների վրա, հեղինակները առանձնացնում են թվացյալ պարզ հետևյալ սցենարները՝

1. Հաղթողի սցենար: «Ես լավն եմ, բոլորը լավն են, ու կյանքում ընդհանուր առմամբ հակադրությունների չեմ հանդիպում»:

2. Անհաջողակի սցենար: «Ես վատն եմ, բոլորը վատն են, ու հաճախ են իրականության հետ բախումները»:

3. Չարացած, վատատեսների սցենար: «Մենք լավն ենք, իսկ մեզ շրջապատում է միայն վատը»:

4. Անլիարժեքության սցենար: «Ես վատն եմ, բոլորը՝ լավը»<sup>6</sup>:

Ընդհանրացնելով մեր կողմից վերլուծված հիմնական սահմանումները, մենք կյանքի սցենարը դիտարկում ենք որպես *երիտասարդի ապագայի կառուցման սխեմա*, որն էլ պայմանավորում է երիտասարդի հետագա գործունեությունը:

Այժմ դիտարկենք եկրու միությունները, որոնց հետ հարաբերություններ է կառուցում Հայաստանը: Այդ միություններից մեկը Եվրոպական Միությունն է, մյուսը՝ Եվրասիական տնտեսական միությունը: Երկու կազմակերպությունների մասին տեղեկությունը անհրաժեշտ է հարցումների պատասխանները եւ վերլուծությունը լավ պատկերացնելու համար:

### **Եվրոպական Միություն (ԵՄ)**

ԵՄ եվրոպական 28 երկրների միջև տնտեսական և քաղաքական գործընկերություն է: ԵՄ-ի ակունքները սկիզբ են դրվել Երկրորդ աշխարհամարտից հետո: Առաջին քայլերն ուղղված էին տնտեսական համագործակցության խթանմանը: Գաղափարն այն էր, որ միմյանց հետ առևտուր անող երկրները տնտեսապես փոխկապակցված լինեն, և այս կերպ, ավելի հավանական է, խուսափեն հակամարտությունից: Արդյունքում, 1958 թ-ին ստեղծվեց Եվրոպական տնտեսական համայնքը (ԵՏՀ)՝ ի սկզբանե վեց երկրների՝

<sup>5</sup> Интернет страница “Психология”. последнее вхождение. 2014г, сентябрь: <http://psycop.ru/psixologiya-lichnosti/zhiznennyye-scenarii-kto-ya-i-chyu-zhizn-prozhivayu.html14.01.2014>

<sup>6</sup> СтудопедияИнтернет страница. Жизненные сценарии человека. Последнее вхождение: 2014г, сентябрь: [http://studopedia.ru/view\\_psihilogiya.php?id=40](http://studopedia.ru/view_psihilogiya.php?id=40)

Բելգիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Լյուքսեմբուրգի և Նիդերլանդների միջև տնտեսական աճող համագործակցությունը: Այդ ժամանակվանից իվեր մի մեծ միասնական շուկա է ստեղծվել և շարունակում է զարգանալ ողջ ներուժով:

Մակայն այն, ինչ սկսվել է որպես զուտ տնտեսական միություն, այժմ դարձել է մի կազմակերպություն, որը ներառում է քաղաքականության բոլոր ոլորտները՝ զարգացման աջակցությունից մինչև շրջակա միջավայր:

Հենց այս փոփոխությունն է արտացոլում 1993 թվականին կազմակերպության անվանման փոփոխությունը Եվրոպական տնտեսական համայնքից (ԵՏՀ) Եվրոպական միության:

ԵՄ-ն կես դար շարունակ խաղաղություն, կայունություն և բարգավաճում է տարածել, օգնել բարձրացնել կենսամակարդակը և հիմք դրել Եվրոպական միասնական արժույթին:

ԵՄ անդամ երկրների միջև սահմանային վերահսկողության վերացման շնորհիվ մայրցամաքի մեծ մասով մարդիկ կարող են ազատ ճանապարհորդել: Ավելի հեշտ է դարձել Եվրոպայում ապրել ու աշխատել արտերկրում: Եվրոպական միությունը հիմնված է իրավունքի գերակայության վրա: Մա նշանակում է, որ ամենը, ինչ անում է Եվրոպական միությունը, հիմնված է պայմանագրերի վրա՝ կամավոր և ժողովրդավարական սկզբունքով համաձայնեցված բոլոր անդամ երկրների կողմից: Այդ պարտադիր համաձայնագրերը սահմանում են ԵՄ նպատակները՝ իր գործունեության բազմաթիվ ոլորտներում:

ԵՄ հիմնական նպատակներից մեկը մարդու իրավունքների պաշտպանությանը նպաստելն է՝ ինչպես միության ներսում, այնպես էլ՝ ամբողջ աշխարհում: Մարդու արժանապատվություն, ազատություն, ժողովրդավարություն, հավասարություն, իրավունքի գերակայություն և մարդու իրավունքների նկատմամբ հարգանք. Սրանք են ԵՄ հիմնական արժեքները:

Միասնական շուկան ԵՄ հիմնական տնտեսական շարժիչ ուժն է, որն ազատ տեղաշարժվելու հնարավորություն է տալիս ապրանքների, ծառայությունների, դրամական միջոցների և մարդկանց մեծամասի համար: Միասնական արժույթի առավելություններն ակնհայտ են այն մարդկանց համար, ովքեր ճանապարհորդում կամ առցանց գնումներ են կատարում ԵՄ երկրներում: Քանի որ ԵՄ-ն շարունակում է



աճել, այն ուշադրության կենտրոնում է պահում կառավարման մարմինների առավել թափանցիկ և ժողովրդավար դարձնելու անհրաժեշտությունը:

Ավելի շատ լիազորություններ են տրվում ուղղակիորեն ընտրված Եվրոպական խորհրդարանին, իսկ ազգային խորհրդարաններն ավելի մեծ դեր են ստանձնում՝ աշխատելով Եվրոպական կառույցների հետ միասին: Միաժամանակ, Եվրոպացիները անընդհատ աճող հնարավորություններ են ձեռքբերում՝ մասնակցելու քաղաքական գործընթացներին <sup>7</sup>:

### **Եվրասիական տնտեսական ընկերակցությունը (ԵվրԱզԷՍ)**

ԵվրԱզԷՍ (այժմ՝ Եվրասիական տնտեսական միություն) միջազգային տնտեսական կազմակերպություն է, որն ունի անդամ երկրներում (Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, ՌԴ, Տաջիկստան, Ուզբեկստան) ընդհանուր արտաքին մաքսային սահմանների ձևավորման, միասնական արտաքին տնտեսական քաղաքականության, սակագների, գների և ընդհանուր շուկայի գործառնության այլ բաղկացուցիչների մշակման նշանակություն:

ԵվրԱզԷՍ կազմակերպությունը դարձել է Մաքսային միության իրավահաջորդը: ԵվրԱզԷՍ-ի հիմնադրումը դարձավ նախնառաջ տնտեսական ոլորտում խոր և դինամիկ ինտեգրացման ուղի ընտրած ԱՊՀ 5 երկրների կազմակերպա-իրավական միավորման գործընթացի տրամաբանական ավարտը<sup>8</sup>:

### **Հետազոտության նպատակը և խնդիրները**

Հետազոտության նպատակն է բացահայտել հայ երիտասարդների կյանքի պլանավորման առանձնահատկությունները, պատկերացումները Հայաստանի Հանրապետության քաղաքականության վերաբերյալ, համապատասխանությունը իրենց նպատակների և երկրում առկա պայմանների միջև:

Մեր կողմից, որպես ուսումնասիրման առանցքային հարցեր, առանձնացնում ենք՝

- Երիտասարդների պատկերացումները սեփական կյանքի հեռանկարի (կրթություն, աշխատանք, բնակավայր) վերաբերյալ՝ կախված երկրի տնտեսական հնարավոր անդամակցությունից(ԵՄ կամ Եվրասիական տնտեսական միության):

<sup>7</sup> ԵՄ կենտրոնի պաշտոնական կայք: ԵՄ-ը Հայաստանում: Վերջին անգամ մուտք է գործվել 2014թ. սեպտեմբերին՝ <http://eucentre.am/hy/%D5%A5%D5%B4-%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4/>

<sup>8</sup> ՀՀ Արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք: Միջազգային կազմակերպություններ: Եվրասիական տնտեսական ընկերակցություն: Վերջին անգամ մուտք է գործվել 2014թ. սեպտեմբերին՝ <http://www.mfa.am/hy/international-organisations/EurAsEC/>

▪ Ըստ հայ երիտասարդների՝ իրենց նյութական և սոցիալական պահանջմունքների բավարարվածության մակարդակն ու պայմանները հնարավոր անդամակցության դեպքում Հայաստանի Հանրապետությունում կամ այլ երկրներում:


▪ Երիտասարդների պատկերացումները, գիտելիքները ՀՀ որևէ տնտեսական միության անդամակցության վերաբերյալ, այդ փաստի հանդեպ նրանց ունեցած վերաբերմունքը

▪ Երիտասարդների, իրենց նպատակներից կախված, երկրի կամ ՀՀ-ի որևէ միությանն անդամակցելու ցանկալի ընտրության պատճառները և դրան ուղղված գործողությունները:

**Մեթոդաբանություն**

Առաջարկված խնդիրների լուծման համար մեր կողմից ընտրվել են քանակական և որակական վերլուծության և փաստաթղթային վերլուծության մեթոդները: Հետազոտական ընտրանքը բաղկացած է 18-30 տարեկան 450 հետազոտվողից: Քանակական հետազոտության շրջանակներում հարցում է իրականացվել Երևան, Գյումրի, Վանաձոր, Իջևան քաղաքների բարձրագույն կրթություն ունեցող և չունեցող երիտասարդության հետ: Ընտրվել են այս քաղաքները, քանի որ ունեն բարձրագույն ուսումնական հաստատություններ: Թեև ընտրանքի կազմման պարագայում մեր կողմից սեռային սահմանափակումներ չկային դրված, այնուամենայնիվ, հավասարաչափ բաշխվածությունը փորձել ենք պահպանել: Ի հակասում մեր սպասումների, մարզերում ցածր էր վստահության մակարդակը, որի արդյունքում շատերը հրաժարվում էին պատասխանել կամ էլ ավարտին չէին հասցնում հարցաթերթի լրացումը:

**Հետազոտության մեթոդաբանությունը**



*Նկար 1. Հետազոտության մեթոդաբանություն*

Քանակական հետազոտությունը իրականացրել ենք KAP (Knowledge, Attitude, Practices) մեթոդով<sup>9</sup> 10:

Տվյալ մեթոդն ուղղված է կոնկրետ սոցիալական, տնտեսական, մշակութային երևույթների ուսումնասիրմանը: Դուրս է բերում, թե կոնկրետ երևույթի, իրադարձության, իրավիճակի վերաբերյալ

- Ինչ գիտենք
- Ինչպես ենք վերաբերվում
- Ինչ վարք ենք ցուցաբերում:

Մեր կողմից կազմված հարցարանը հիմնված է այս մեթոդի վրա: Այն կազմված է 4 հիմնական մասերից: Առաջին մասն ուղղված է հայ երիտասարդների նպատակների և դրանց իրականացման պայմանների բացահայտմանը: Երկրորդ մասում ընդգրկված հարցերն ուղղված են բացահայտելու ՀՀ-ում կյանքի որակով բավարարվածության մակարդակը: Երրորդ մասն ուղղված է բացահայտելու երիտասարդների ընդհանուր իրազեկվածությունը ՀՀ-ի ներկայիս որդեգրած քաղաքականության վերաբերյալ և դրա հանդեպ ունեցած վերաբերմունքը: Վերջին՝ չորրորդ մասը ներառում է հետազոտվողի անձնական տվյալները: Հարցաթերթը ներկայացված է Հավելվածում:

Որակական վերլուծություն իրականացրել ենք հարցազրույցի միջոցով՝ տասը փորձագետների հետ՝ հետևյալ մասնագիտացմամբ՝

- Քաղաքագետներ, քանի որ խնդիրն առնչվում է պետության հետ, ով ընդունում է որոշումներ, որն էլ նման տեղաշարժեր է առաջացնում
- աշխատանքի մասնագետներ, քանի որ ներկա դրությամբ երիտասարդի համար ակտուալ խնդիրը աշխատանքն է, ինչի բացակայությունը կամ ոչ բավարար պայմանները ևս կարող է ազդել կյանքի պլանավորման վրա
- հոգեբաններ, ովքեր կարող են ներկայացնել կյանքի սցենարի կազմման, անձի նպատակադրման առանձնահատկությունները և հնարավոր խնդիրները, որոնք կարող են առաջանալ այդ գործընթացում

<sup>9</sup> Gumucio, Sybille. Data collection Quantitative methodes the kap survey model (knowledge, attitude & practices). 2011. IGC Communigraphie 38 p.

<sup>10</sup> Goutille, Fabienne. Guideline for KAP Survey Managers. Knowledge, Attitudes and Practices for Risk Education: how to implement KAP surveys. 2009. Lyon: Vassel graphique. 84 p.

- կրթության ոլորտում գործող մասնագետներ, ովքեր, հաշվի առնելով ներկայիս կրթության որակը և դրանով երիտասարդության բավարարվածությունը, կարող են ներկայացնել կրթության ոլորտում առկա խնդիրները

- լրագրողներ, ովքեր կարող են ներկայացնել, թե ինչ տեղեկատվություն է ստանում երիտասարդը երկրում տիրող սոցիալ-տնտեսական, քաղաքական տեղաշարժերի վերաբերյալ:

Մենք հանդիպեցինք մի շարք խոչընդոտների, որոնք կանխատեսել էինք: Դրանց թվին է պատկանում օրինակ այն, որ ընտրանքում ընդգրկված երիտասարդները հարում էին որևէ քաղաքական կուսակցության կամ ունեին որոշակի քաղաքական ուղղվածություն: Որպես խոչընդոտ դիտարկում ենք նաև այն հանգամանքը, որ լինելով ուսանողական որոշակի կառույցների անդամ, երիտասարդ հետազոտվողները ունեին որոշակի կողմնորոշում և հետևաբար այդ փաստը անդրադառնում էր պատասխանների անկեղծության վրա: Մեր կողմից առանձնացված խոչընդոտների շարքին է պատկանում նաև այն ժամանակահատվածը, որի ընթացքում իրականացվել է հետազոտությունը, քանի որ այն համընկնում էր կրթական համակարգում գործող ամառային արձակուրդների հետ, և ազդեց երիտասարդների բավարար քանակի մասնակցության վրա:

### **Հետազոտության հիմնական արդյունքները**


Այս բաժնում ներկայացված են երիտասարդների կյանքի սցենարի վերաբերյալ պատկերացումները՝ կախված երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական իրադրությունից:

#### **Երիտասարդների նպատակները**

Վերլուծելով հետազոտական արդյունքները դուրս բերեցինք երիտասարդների կողմից նշվող, առավել շատ հանդիպող նպատակների վեց խումբ: Թեև շատ էին նաև վերացական նպատակները՝ կապված խաղաղության, համերաշխության հետ: Կային նպատակներ, որոնք պայմանավորված էին տարածաշրջանի առանձնահատկություններով և տվյալ ժամանակի իրադարձություններով, օրինակ, Իջևանում տղաների նպատակների մեջ հաճախ էին հանդիպում հողը պաշտպանելու և բանակում ծառայելու նպատակները, ինչը ենթադրում ենք, որ կապված է տվյալ

տարածքի սահմանին մոտ լինելու և տվյալ ժամանակահատվածում սահմանում տիրող լարված մթնոլորտի հետ:


Երիտասարդները իրենց նպատակները ներկայացրել են ըստ կարևորության և ինչպես ներկայացված է նկար 2-ում ըստ կարևորության առաջին տեղում է աշխատանքը (2.84): Համապատասխանաբար ուսումը երկրորդ տեղում է՝ 2.6, ընտանիքը՝ 1.65, ձեռքբերումը՝ 1.4, արտասահմանը՝ 0.58 և ճանապարհորդելը՝ 0.51:



Նկար 2. Երիտասարդների նպատակները ըստ կարևորության

Երիտասարդները գնահատել են նաև իրենց կողմից նշված նպատակների իրատեսականության աստիճանը 5 բալանոց սանդղակով (1-ը ամենաիրատեսական, 5-ը ամենաանիրատեսական): Ինչպես ներկայացված է նկար 3-ում, երիտասարդների մեծամասնությունը լինելով ուսումնական գործընթացում նրանց համար, ամենաիրատեսական նպատակը ուսումն է՝ 1.6: Ըստ իրատեսականության աստիճանի, երկրորդ տեղը զբաղեցնում է արտասահման մեկնելը՝ 2, այնուհետև՝ ընտանիքը՝ 2.01, աշխատանքը՝ 2,13, ձեռքբերումը՝ 2,33, ճանապարհորդելը՝ 2,38:

### Երիտասարդների նպատակների իրատեսականությունը




Նկար 3. Երիտասարդների նպատակների իրատեսականությունը

Հիմնվելով մեր ստացած տվյալների վրա մենք համեմատել ենք նպատակների կարևորության մակարդակը ըստ կրթության աստիճանի, զբաղվածության, բնակավայրի, արտասահմանում բարեկամներ ունենալու հանգամանքի և սեռի ցուցանիշների:


Համաձայն մեր կողմից ստացված տվյալների, ըստ կրթության աստիճանի էական տարբերություններ չնկատվեցին աշխատանքի, ճանապարհորդության, արտասահման մեկնելու, ձեռքբերման նպատակների միջև: Ըստ կրթության աստիճանի տարբերություններ կային ուսման և ընտանիքի նպատակների կարևորության մեջ: Ինչպես ներկայացված է նկար 4-ում, ուսման նպատակի կարևորությունը վիճակագրորեն տարբերվում է մագիստրոսների ( $M=1,39$ ) և միջնակարգ կրթություն ունեցողների ( $M=3,25$ ) ( $p=,044$ ), լրիվ միջնակարգ կրթություն ունեցողների ( $M=4,13$ ) և մագիստրոսների ( $M=1,39$ ) ( $p=,000$ ), բակալավրի ( $M=2,90$ ) ( $p=,000$ ) և մագիստրոսների ( $M=1,39$ ) միջև: Ընդ որում, կրթության հանգամանքը առավել կարևորում են լրիվ միջնակարգ կրթություն ունեցողները: Ենթադրում ենք, որ դա կապված է այն հանգամանքի հետ, որ նրանք գտնվում են կրթությունը շարունակելու խնդրի առաջ: Իսկ առավել քիչ կարևորություն տալիս են մագիստրոսները, ինչը կարող ենք բացատրել նրանով, որ ունենալով որոշակի կրթական <<ճանապարհ>>, դադարել են դրան այդքան կարևորություն տալ: Ենթադրում ենք նաև, որ կարևորության անկումը կարող է պայմանավորված լինել կրթական գործընթացում առաջ եկած որոշակի հիասթափություններով: Միջին մասնագիտական կրթական աստիճան ունեցողները

ուսման կարևորմամբ չէին տարբերվում մագիստրոսներից: Ենթադրում ենք, որ նրանք ձեռք են բերել ընթացիկ որևէ մասնագիտություն, արհեստ և համարում են, որ կրթությունը այդքանով ավարտված է:



*Նկար 4. Ուսման կարևորությունը ըստ կրթության աստիճանի*

Վիճակագրական տարբերություններ կային նաև ընտանիքի կարևորության հարցում՝ կախված կրթական աստիճանից: Ըստ հետազոտության արդյունքների, մագիստրոսները ( $M=2,29$ ) ավելի մեծ կարևորություն են տալիս ընտանիքին, քան լրիվ միջնակարգ կրթություն ունեցողները ( $M=0,66$ ) ( $p=,001$ ): Սա, ենթադրում ենք, որ կարող է կապված լինել այն հանգամանքի հետ, որ մագիստրոսների համար, տարիքից կախված, ավելի ակտուալ խնդիր է ընտանիքի ստեղծումը (նկար 5):




*Նկար 5. Ընտանիքի կարևորությունը ըստ կրթության աստիճանի*

Հաջորդ չափանիշը, որ դիտարկել ենք, նպատակների կարևորությունն է ըստ զբաղվածության աստիճանի: Համաձայն նկար 6-ի, ուսման կարևորության հարցում վիճակագրական տարբերություն նկատվեց աշխատող ( $M=1,07$ ) և զուգահեռ աշխատող ու սովորողների ( $M=3,22$ ) միջև ( $p=,000$ ) միջև: Ընդ որում, ուսումը առավել կարևորում են զուգահեռ աշխատող և սովորողները: Որը բացատրում ենք այն հանգամանքով, որ ամեն դեպքում վերջիններս ինչ-որ ժամանակ հատկացնում են կրթությանը:

Զգալի տարբերություններ նկատելի են նաև սովորողների ( $M=3,67$ ) և միայն աշխատողների ( $M=1,07$ ) ( $p=,000$ ), ինչպես նաև սովորողների ( $M=3,67$ ) և չաշխատողների ( $M=2,19$ ) ( $p=,007$ ) միջև: Սովորողները ավելի շատ կարևորություն են տալիս ուսմանը, քան աշխատողները: Ինչը կարելի է բացատրել այն պարզ հանգամանքով, որ նրանց առաջնային գործունեությունը ուսումն է: Հետաքրքիրն այն է, որ սովորողների և չաշխատողների միջև ևս էական տարբերություններ է նկատվել, ինչը կարելի է բացատրել ուսման հանդեպ սուբյեկտիվ վերաբերմունքի, պահանջմունքի, մոտիվացիայի հետ: Մնացած դեպքերում էական տարբերություններ չնկատվեցին:

### Ուսման կարևորությունը ըստ զբաղվածության




Նկար 6. Ուսման կարևորությունը ըստ զբաղվածության

Ընտանիքի կարևորությունը ըստ զբաղվածության ներկայացված է նկար 7-ում: Ինչպես տեսնում ենք, զգալի տարբերություններ են նկատելի սովորողների ( $M=1,10$ ) և աշխատողների ( $M=2,33$ ) ( $p=,000$ ), ինչպես նաև սովորողների ( $M=1,10$ ) և այլ մասնագիտությամբ աշխատողների ( $M=2,39$ ) ( $p=,039$ ) միջև: Սովորողները համեմատաբար ավելի քիչ տեղ են տալիս ընտանիքին, ինչը կարող է պայմանավորված



լինել մի քանի գործոններով՝ չաշխատելու հանգամանքով, կրթության առաջնահերթությամբ և կրթությանը հատկացվող շատ ժամանակով:


### Ընտանիքի կարևորությունը ըստ զբաղվածության



Նկար 7. Ընտանիքի կարևորությունը ըստ զբաղվածության

Նպատակների կարևորությունը համեմատվել է ըստ ընտանեկան կարգավիճակի: Վիճակագրական տարբերություններ հիմնականում նկատվել են կապված ուսման, ձեռքբերման և արտասահման մեկնելու նպատակների հետ: Համաձայն նկար 8-ի, ուսումը՝ որպես նպատակ, առավել շատ կարևորում են չամուսնացածները ( $M=2,73$ ), քան ամուսնացածները ( $M=1,35$ ): Ինչը կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով՝ ուսմանը հատկացվող շատ ժամանակով, կարևորությամբ, մոտիվացիով և այլն:


### Ուսման կարևորությունը ըստ ընտանեկան կարգավիճակի



Նկար 8. Ուսման կարևորությունը ըստ ընտանեկան կարգավիճակի

Տարբերություններ կային նաև ընտանեկան կարգավիճակից կախված ձեռքբերման նպատակի կարևորության դեպքում: Համաձայն ստացած տվյալների, առավել կարևոր է ձեռքբերման նպատակը ամուսնացածների ( $M=2,08$ ) համար, քան՝ չամուսնացածների ( $M=1,36$ ): Ինչը կարող ենք բացատրել նրանով, որ ամուսնանալուց հետո առաջ են գալիս մի շարք խնդիրներ, որոնք կապված են նյութական որոշ ձեռքբերումների հետ, օրինակ՝ բնակարան, մեքենա և այլն:

### Ձեռքբերման նպատակի կարևորությունը ըստ ընտանեկան կարգավիճակի




Նկար 9. Ձեռքբերման նպատակի կարևորությունը ըստ ընտանեկան կարգավիճակի

Տարբերություններ կային նաև ընտանեկան կարգավիճակից կախված արտասահման մեկնելու նպատակի դեպքում: Չամուսնացածները ( $M=,62$ ) ավելի շատ են կարևորություն տալիս արտասահման մեկնելուն, քան ամուսնացածները ( $M=,08$ ) (նկար10): Դա կարելի է բացատրել մի քանի տեսանկյունից՝

1. Չամուսնացածների դեպքում չկա հնարավորությունների սահմանափակում, այսինքն՝ չկան կապող հանգամանքներ
2. Ցանկությունը կառուցել կյանքը արտասահմանում
3. Առաջ եկող հնարավոր դժվարությունները ընտանիքով մեկնելու պարագայում:

### Արտասահման մեկնելու նպատակի կարևորությունը ըստ ընտանեկան կարգավիճակի




Նկար 10. Արտասահման մեկնելու նպատակի կարևորությունը ըստ ընտանեկան կարգավիճակի

Ընտանեկան կարգավիճակից կախված մնացած նպատակների միջև էական տարբերություններ չկային դուրս բերված:

Նպատակների կարևորությունը համեմատել ենք նաև բնակավայրի գործոնի հետ և դուրս ենք բերել, որ ըստ բնակավայրի, բացի ընտանիք կազմելու նպատակից, մնացած նպատակների կարևորությունը զգալիորեն չէր տարբերվում: Ըստ բնակավայրի, պարզվեց, որ երևանաբնակ երիտասարդությունը (M=2,44) ավելի է կարևորում ամուսնությունը, քան իջևանաբնակ (M=3,21, p=,032) (նկար 11): Դժվար է իհարկե գտնել կոնկրետ բացատրություն նման արդյունքի համար, բայց հաշվի առնելով հետազոտության իրականացման ժամանակահատվածը (ինչպես արդեն նշել էինք՝ կապված սահմանի լարված իրադրության հետ) կարող էր անվտանգության ցածր մակարդակը իջեցնել ընտանիք կազմելու կարևորության աստիճանը:


### Ընտանիքի կարևորությունը ըստ բնակավայրի



Նկար 11. Ընտանիքի կարևորությունը ըստ բնակավայրի

Համաձայն մեր կողմից առանձնացված վերջին գործոնի՝ արտասահմանում բարեկամներ ունենալու հանգամանքի, նպատակների կարևորության մեջ տարբերություններ չկան:

Հետազոտվողները նշել են նաև, թե իրենց կողմից առանձնացված նպատակների իրականացումը ումից, ինչ հանգամանքներից է կախված: Ու արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը (նկար 12):




*Նկար 12. Նպատակների իրականացման պայմանավորվածությունը*

Կախված բնակավայրի, սեռի, կրթության գործոններից նպատակների իրականացման կախվածության մեջ էական տարբերություններ դուրս չենք բերել:

Այն հարցի պատասխաններից, թե որտեղ է տեսնում իրեն հայ երիտասարդը 5 տարի անց, ստացել ենք այն պատկերը, որ մեծամասնությունը՝ 59.40% իրենց տեսնում են Հայաստանում (նկար 13): Չնայած մեծ թվով միգրացիայի երիտասարդները ուզում են կապեն իրենց ապագան հայրենիքի հետ: Իսկ ցանկացողների մեջ ավելի շատ երիտասարդներ նախընտրում են Եվրոպան՝ 15,5%, քան Ռուսաստանը՝ 6,5%: Այդ արդյունքները համեմատվել են սեռի, կրթության, զբաղվածության, ընտանեկան կարգավիճակի ցուցանիշների հետ և դուրս է բերվել, որ այդ չափանիշներով երկրի նախընտրությունների միջև էական տարբերություններ չկան:

### Որտեղ է տեսնում իրեն հայ երիտասարդը




Նկար 13. Որտեղ է տեսնում իրեն հայ երիտասարդը

Երկրի նախընտրությունը համեմատվել է նաև բնակավայրի գործոնի հետ: Ընդհանուր տեսնդենցում նկատվում էր, որ հետազոտվողները Եվրոպական երկրները ավելի շատ էին նախընտրում, քան Ռուսաստանը: Սակայն ինչպես ներկայացված է նկար 14-ում, էական տարբերություններ կան Իջևան և Վանաձոր քաղաքներում: Ինչպես տեսնում ենք, Իջևան քաղաքում Եվրոպան և Ռուսաստանը նախընտրել են միևնույն քանակի մարդիկ, իսկ Վանաձորում Եվրոպա նախընտրողները ավելի քիչ են ( $p = ,045$ ): Սա կարելի է բացատրել մի քանի գործոնով՝

1. Բովանդակային վերլուծության արդյունքում պարզվեց, որ Իջևանում ՌԴ-ին դիտարկում են որպես սահմանը պաշտպանող, աջակից երկիր
2. Արտագնա աշխատանքի գնացողները ՌԴ ավելի շատ են, և նրանց կողմից նշվում էր, որ Ռուսաստանի կողմից աջակցությունը ավելի մեծ կլինի աշխատողների հանդեպ

### Ըստ բնակության վայրի նախընտրելի երկիրը



Նկար 14. Ըստ բնակության վայրի նախընտրելի երկիրը


Այսպիսով, հայ երիտասարդները իրենց համար որպես ամենակարևոր նպատակներ առանձնացրել են հետևյալ վեց նպատակները՝

1. Ուսում
2. Աշխատանք
3. Ընտանիք
4. Ճանապարհորդություն
5. Ձեռքբերում
6. Մեկնել արտասահման


Ըստ կարևորության առաջին տեղում է աշխատանքը, բայց գնահատելով տվյալ նպատակների իրատեսականության աստիճանը երիտասարդները, (մասնավորապես միջնակարգ կրթություն ունեցողները, ովքեր կրթությունը շարունակելու նախաշեմին են) ավելի իրատեսական են համարել ուսումը: Երիտասարդների մոտ էական տարբերություններ նկատվել են կախված ընտանեկան կարգավիճակից, զբաղվածության աստիճանից և բնակավայրից: Չամուսնացած երիտասարդների մոտ առաջնային և կարևոր նպատակ դեռևս շարունակում է մնալ ուսումը, ինչպես նաև արտասահման մեկնելը, մինչդեռ ամուսնացած երիտասարդների համար որպես կարևոր նպատակ սահմանվում է ձեռքբերումը (բնակարան, մեքենա և այլն): Աշխատողները առավել կարևոր նպատակ համարում են ընտանիքը, իսկ չաշխատողները՝ ուսումը: Հետաքրքրական է, որ երևանաբանկները ավելի շատ են կարևորում ընտանիքի կազմումը որպես նպատակ: Երիտասարդները հիմնականում իրենց նպատակների իրականացումը կապում են իրենց անձի հետ, հաշվի առնելով՝ ընտանիքի աջակցությունը, երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակը: Երիտասարդների 59.40%-ը իրենց ապագան տեսնում են Հայաստանի Հանրապետությունում: Կախված բնակավայրից տարբերություններ կային Վանաձոր և Իջևան քաղաքներում: Իջևանում համամասնությունը հիմնականում պահպանված էր, ի տարբերություն Վանաձորի, որտեղ Եվրոպա նախընտրողները անհամեմատ ավելի քիչ էին:

**Երիտասարդների բավարարվածության եվ սպասումներին  
համապատասխանության գնահատման վերլուծություն**

Հետազոտության ընթացքում երիտասարդները գնահատել են նաև իրենց բավարարվածության աստիճանը և իրենց սպասումներին համապատասխանությունը մի քանի ոլորտներում, որոնք են՝ իրավական պաշտպանվածությունը, կրթական բավարարվածությունը, ֆինանսական ապահովվածությունը, ներկայիս բարեկեցությունը, աշխատանքային պայմաններով բավարարվածության աստիճանը և ընդհանուր առմամբ կյանքի որակով բավարարվածությունը: Գնահատումը կատարվել է 5 բալանոց համակարգով, որտեղ 5-ը բավարարվածության ամենաբարձր աստիճանն է, իսկ 1-ը՝ ամենացածր: Մեր կողմից ստացված արդյունքները ներկայացնում ենք նկար 15-ում և 16-ում:



Նկար 15. Երիտասարդների բավարարվածության աստիճանը ըստ ոլորտների




Նկար 16. Երիտասարդների սպասումներին համապատասխանությունը ըստ ոլորտների

Բավարարվածության աստիճանի և սպասումների համապատասխանության ցուցանիշները համեմատվել են ըստ կրթության մակարդակի: Էական

տարբերություններ են նկատվել մի քանի ոլորտներում: Ներկայացնենք դրանք առանձին-առանձին:

Ինչպես տեսնում ենք նկար 17-ում, իրավական պաշտպանվածության համապատասխանությունը սպասումներին էական տարբերվում է մագիստրոսների (M=2,20) և միջնակարգ կրթություն ունեցողների (M=3,25) մոտ (p=,013): Մագիստրոսները ավելի շատ ակնկալիքներ ունեն իրավական պաշտպանվածության ոլորտում, քան միջնակարգ կրթություն ունեցողները: Ինչը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ մագիստրոսները ավելի տեղեկացված են իրավական ոլորտից և ավելի շատ պահանջներ ունեն իրենցից և շրջապատից: Բացի այդ, կրթության առումով, առաջարկվող հնարավորությունները ավելի շատ են մագիստրոսների համար, ինչը ենթադրում է իրավական ոլորտի իմացություն և համապատասխանաբար իրավական պաշտպանվածության գիտակցում:

**Իրավական պաշտպանվածության մակարդակով բավարարվածության համապատասխանությունը սպասումներին ըստ կրթական աստիճանի**




*Նկար 17. Իրավական պաշտպանվածության մակարդակով բավարարվածության համապատասխանությունը սպասումներին ըստ կրթական աստիճանի*

Մյուս ոլորտը, որտեղ կային էական տարբերություններ ըստ կրթական աստիճանի, կրթական ոլորտով բավարարվածության համապատասխանությունն է սպասելիքներին: Ինչպես երևում է նկար 18-ից, միջնակարգ կրթություն ունեցողների (M=3,85) սպասելիքները կրթական ոլորտում բավարարվածության առումով ավելի ցածր են, քան մագիստրոսների (M=2,63) (p=,008) և միջին մասնագիտականներինը (M=2,58) (p=,024): Ինչը բացատրում ենք հետևյալով, որ մագիստրոսները, ձգտելով կրթական մակարդակում ավելի բարձր աստիճանների, զուգահեռ դնում են ավելի շատ պահանջներ և հետևաբար ունենում են ավելի շատ ակնկալիքներ, որոնցից մեր



իրականության մեջ ոչ բոլորն են բավարարվում, ինչն էլ հանգեցնում է կրթական բավարարվածության աստիճանի անկման: Ինչ վերաբերում է միջին մասնագիտական կրթություն ունեցողներին, նշենք, որ թեև նրանք կոնկրետ բացատրություններ չեն գրել, ենթադրում ենք, որ դա կարող է կապված լինել կրթության <<կիսատության>> զգացման հետ, այսինքն՝ հետագայում ուսումը բարձրագույն ուսումնական հաստատություններում շարունակելու ցանկության հետ:


**Կրթական բավարարվածության աստիճանի համապատասխանությունը սպասումներին ըստ կրթական աստիճանի**



*Նկար 18. Կրթական բավարարվածության աստիճանի համապատասխանությունը սպասումներին ըստ կրթական աստիճանի*

Ինչպես տեսնում ենք նկար 19-ում, ֆինանսական մակարդակով բավարարվածության համապատասխանությունը սպասումներին ամենաբարձրը միջնակարգ կրթություն ունեցողների մոտ է ( $M=3.30$ ): Էական տարբերություն է զգացվում միջնակարգ ( $M=3,30$ ) և միջին մասնագիտական կրթություն ունեցողների ( $M=2,17$ ) ( $p=,019$ ), ինչպես նաև մագիստրոսների ( $M=1,96$ ) և միջնակարգ կրթություն ունեցողների ( $M=3,30$ ) ( $p=,000$ ) միջև: Սա կարող ենք բացատրել այն հանգամանքով, որ մագիստրոսները ավելի բարձր կրթական աստիճան ունենալով, ավելի շատ ֆինանսական սպասելիքներ ունեն, քան միջնակարգ կրթություն ունեցողները: Դժվար է բացատրել միջին մասնագիտականի և միջնակարգ կրթություն ունեցողների միջև առկա տարբերությունը: Ենթադրում ենք, որ միջին մասնագիտական կրթություն ունեցողը, ունենալով որոշակի հմտություններ, տիրապետելով որոշակի արհեստի, ի տարբերություն միջնակարգ կրթություն ունեցողի ունենում է որոշակի պահանջներ, որոնք լիարժեք չեն բավարարվում:


**Ֆինանսական մակարդակով բավարարվածության համապատասխանությունը սպասումներին ըստ կրթական աստիճանի**



*Նկար 19. Ֆինանսական մակարդակով բավարարվածության համապատասխանությունը սպասումներին ըստ կրթական աստիճանի*

Էական տարբերություններ նկատելի են միջնակարգ կրթություն ունեցողների (M=3,15) և մագիստրանտների (M=2,15) միջև բարեկեցության աստիճանով բավարարվածության սպասումներին համապատասխանության մեջ (p=,019): Արդյունքները ներկայացված են նկար 20-ում, որտեղ երևում է, որ միջնակարգ կրթություն ունեցողների մոտ բարեկեցության աստիճանով բավարարվածության համապատասխանությունը սպասումներին ավելի բարձր է, այսինքն՝ ի տարբերություն մագիստրանտների, ավելի քիչ սպասումներ ունեն: Ինչպես նկատեցինք նախորդ ոլորտներով բավարարվածության համապատասխանությունը սպասումներին միջնակարգ կրթություն ունեցողների մոտ ավելի բարձր է, քան մագիստրանտների մոտ: Ինչը կարող է հանգեցնել նրանց կողմից ներկայիս բարեկեցության աստիճանով բավարարվածության բարձր գնահատականի:

**Ներկայիս բարեկեցության աստիճանով բավարարվածության համապատասխանությունը սպասումներին ըստ կրթության աստիճանի**




*Նկար 20. Ներկայիս բարեկեցության աստիճանով բավարարվածության համապատասխանությունը սպասումներին ըստ կրթական աստիճանի*

Ըստ ոլորտների բավարարվածության և սպասումներին համապատասխանության գնահատման ցուցանիշները համեմատվել են նաև զբաղվածության տվյալների հետ:

Ինչպես ներկայացված է նկար 21-ում, սովորողները ավելի բավարարված են իրավական պաշտպանվածությամբ ( $M=2,95$ ), քան աշխատողները ( $M=2,51$ ,  $p=,031$ ): Այս փաստը կարելի է բացատրել նրանով, որ կրթական ոլորտում ուսանողները ուղղակիորեն քիչ են բախվում իրավական խնդիրների հետ, ինչը կարող է պայմանավորված լինել սեփական իրավունքների ու պարտականությունների չիմացությամբ, իսկ աշխատողները ավելի անմիջական են բախվում իրավական խնդիրների հետ: Բացի այս հանգամանքը, աշխատողները ավելի շատ պատասխանատվություն, իրավունքներ և համապատասխանաբար պարտականություններ ունեն, որոնք մեծացնում են իրավական պաշտպանվածության խնդիրը:


**Իրավական պաշտպանվածությամբ բավարարվածությունը ըստ զբաղվածության**



*Նկար 21. Իրավական պաշտպանվածությամբ բավարարվածությունը ըստ զբաղվածության*

Հետևաբար սպասումներին համապատասխանությունը ևս էական տարբերվում է աշխատողների ( $M=2,19$ ) և սովորողների ( $M=2,72$ :  $p=,009$ ) միջև: Համապատասխանաբար, աշխատողների մոտ իրավական պաշտպանվածության աստիճանով բավարարվածության համապատասխանությունը սպասելիքներին ավելի ցածր է, քան սովորողների մոտ (նկար 22):


**Իրավական պաշտպանվածությամբ բավարարվածության մակարդակի համապատասխանությունը սպասումներին**



*Նկար 22. Իրավական պաշտպանվածությամբ բավարարվածության մակարդակի համապատասխանությունը սպասումներին*


Նկար 23, 24-ում ներկայացված են ֆինանսական ապահովվածությամբ բավարարվածության և սպասումներին համապատասխանության տվյալները: Եվ, ինչպես տեսնում ենք, աշխատողների մոտ ֆինանսական սպասումները ավելի բարձր են ( $M=1,97$ ), հետևաբար բավարարվածության աստիճանը ավելի ցածր է ( $M=2,40$ ), ի տարբերություն սովորողների, որոնց սպասումները ավելի ցածր են ( $M=2,44$ ), բավարարվածությունը՝ բարձր ( $2,86$ ): Այսինքն, աշխատողների ֆինանսական բավարարվածությունը ավելի ցածր է, քան սովորողներինը ( $p=,005$ ), հետևաբար աշխատողների սպասումների համապատասխանությունը ավելի ցածր է, քան սովորողներինը ( $p=,030$ ): Սա կարելի է բացատրել նրանով, որ ուսանողները չունեն հստակ ֆինանսական միջոցներ, կախված են տարաբնույթ օգնություններից և ֆինանսական ապահովվածության խնդիր չունեն:

**Ֆինանսական ապահովվածությամբ բավարարվածության մակարդակը ըստ զբաղվածության**



*Նկար 23. Ֆինանսական ապահովվածությամբ բավարարվածության մակարդակը ըստ զբաղվածության*


**Ֆինանսական ապահովվածությամբ բավարարվածության մակարդակի համապատասխանությունը սպասումներին**



*Նկար 24. Ֆինանսական ապահովվածությամբ բավարարվածության մակարդակի համապատասխանությունը սպասումներին*


Նույն պատկերը նկատելի է ընդհանուր բարեկեցության աստիճանից բավարարվածության և սպասումներին համապատասխանության դեպքում: Այսինքն, ուսանողները ընդհանուր բարեկեցության աստիճանը գնահատում են ավելի բարձր ( $M=3,16$ ), քան աշխատողները ( $M=2,78$ ) ( $p=,022$ ): Էական տարբերություններ նկատելի են նաև սովորողների ( $M=3,16$ ) և չաշխատողների ( $M=2,63$ ) միջև ( $p=,036$ ): Սա կարելի է բացատրել նրանով, որ բավարարվածությունը գնահատելու համար աշխատողները ավելի շատ հանգամանքներ են հաշվի առնում, հենց նույն իրավական, ֆինանսական պաշտպանվածությունը, իսկ ուսանողները և չաշխատողները ընդհանուր առմամբ զերծ են նման խնդիրներից ( նկար 25,26):

**Ներկայիս բարեկեցության աստիճանը ըստ զբաղվածության**



*Նկար 25. Ներկայիս բարեկեցության աստիճանը ըստ զբաղվածության*


**Ներկայիս բարեկեցության աստիճանի համապատասխանությունը սպասումներին ըստ զբաղվածության**



*Նկար 26. Ներկայիս բարեկեցության աստիճանի համապատասխանությունը սպասումներին ըստ զբաղվածության*

Մենք դիտարկել ենք նաև բոլոր ոլորտներով բավարարվածության, սպասումներին համապատասխանության աստիճանի և եկամտի աղբյուրի միջև հնարավոր կապերը: Էական տարբերություններ նկատելի էին միայն իրավական պաշտպանվածության ոլորտում ( $p=0,16$ ): Համաձայն նկար 27-ի, իրավական պաշտպանվածությունից բավարարվածության բարձր ցուցանիշներ են գրանցվել, այն անձանց մոտ, ում եկամտի հիմնական աղբյուր հանդիսանում է ծնողի կամ բարեկամի օգնությունը ( $M=2,97$ ), որը էական տարբերվում է մասնագիտական աշխատանք ունեցող անձանց ցուցանիշներից ( $M=2,59$ ): Դա բացատրվում է նրանով, որ հիմնվելով ծնողի կամ բարեկամի օգնության վրա, տվյալ դեպքում իրավական պաշտպանվածության որևէ խնդիր չի առաջանում, ի տարբերություն մասնագիտական աշխատանք ունեցողների:

**Իրավական պաշտպանվածության աստիճանը ըստ եկամտի աղբյուրի**



*Նկար 27. Իրավական պաշտպանվածության աստիճանը ըստ եկամտի աղբյուրի*

Մեզ հետաքրքիր էր, արդյոք կա տարբերություն ընդհանուր կյանքի որակով բավարարվածության և բնակության համար նախընտրելի երկրների միջև: Մեր կողմից

ստացված արդյունքները հավաստում են, որ նշանակալի որևէ տարբերություն չկա նախընտրելի բնակության վայրի և կյանքի որակի միջև:


Այսպիսով, կրթական աստիճանով պայմանավորված մագիստրոսները իրավական պաշտպանվածության, կրթական ոլորտին առնչվող հարցերում ունեն ավելի սպասելիքներ, քան միջնակարգ կրթություն ունեցողները, հետևաբար բավարարվածությունը և սպասումներին համապատասխանությունը նրանց մոտ անհամեմատ ավելի ցածր է: Ֆինանսական ապահովվածության աստիճանով բավարարվածությունը մագիստրոսների և միջին մասնագիտական կրթություն ունեցողների մոտ ցածր է: Ցածր է նաև ներկայիս բարեկեցության աստիճանի գնահատումը: Ընդհանուր առմամբ նկատելի է, որ մագիստրոսների մոտ ցածր է բավարարվածության մակարդակը, հետևաբար նաև սպասումներին համապատասխանությունը: Աշխատողների մոտ իրավական պաշտպանվածությունից, ֆինանսական ապահովվածությունից և ներկայիս բարեկեցության աստիճանից բավարարվածությունը ցածր է, ի տարբերություն սովորողների. հետևաբար սպասումներին անհամապատասխանությունն էլ ավելի բարձր է:

Եվ ըստ եկամտի աղբյուրի տարբերություններ նկատելի են իրավական պաշտպանվածության ոլորտում: Համաձայն որի, իրավական ոլորտում բավարարվածությունը բարձր է այն երիտասարդների մոտ, ում հիմնական եկամտի աղբյուր հանդիսանում է ծնողի կամ բարեկամի օգնությունը:

### **Երիտասարդների տեղեկացվածությունը եվրոպական միության եվ եվրասիական տնտեսական միության վերաբերյալ**

Հարցաթերթի երրորդ բլոկում մենք անդրադարձել ենք այն հարցին, թե որքանով են հայ երիտասարդները տեղեկացված և հետաքրքրված երկրի տնտեսական, քաղաքական տեղաշարժերով, մասնավորապես՝ ԵՄ և Եվրասիական տնտեսական միությանը վերաբերող հարցերին: Այն հարցին, թե որքանով են տեղեկացված մեր երկրում կազմակերպվող միջոցառումներին՝ ուղղված ԵՄ սկզբունքների որդեգրմանը, 90.5%-ը տվել է բացասական պատասխան (նկար 28):


**Երիտասարդների տեղեկացվածությունը մեր երկրում ԵՄ սկզբունքների որդեգրմանն ուղղված միջոցառումներին**



*Նկար 28. Երիտասարդների տեղեկացվածությունը մեր երկրում ԵՄ սկզբունքների որդեգրմանն ուղղված միջոցառումներին*

Սակայն, ըստ բնակավայրի տարբերություն է նկատվել Գյումրիում, որտեղ համեմատաբար առավել շատ էին տեղեկացված մեր երկրում կազմակերպվող միջոցառումներին՝ ուղղված ԵՄ սկզբունքների որդեգրմանը (նկար 29): Այս արդյունքը, զուգակցելով մեր հետազոտության բովանդակային մասի արդյունքների հետ, կարող ենք նշել, որ Գյումրիում երիտասարդների մոտ առկա բացասական վերաբերմունք կար Ռուսաստանի նկատմամբ, ինչն էլ կարող էր մեծացնել հետաքրքրությունը ԵՄ-ի նկատմամբ (p= ,000):

**ԵՄ-ի վերաբերյալ տեղեկացվածությունը Գյումրիում**




*Նկար 29. ԵՄ-ի վերաբերյալ տեղեկացվածությունը Գյումրիում*

Կրթությունից, ընտանեկան կարգավիճակից, զբաղվածությունից կախված մեր երկրում կազմակերպվող ԵՄ սկզբունքների որդեգրմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկացվածության աստիճանի միջև տարբերություններ չկան:

Այս տվյալները համեմատելով բովանդակային վերլուծության արդյունքների հետ, կարող ենք նշել, որ երիտասարդների զգալի մի շերտ չէր տարբերում Եվրասիական




միությունը և Եվրոպական միությունը միմյանցից: Եվ հաճախ էին նշում, որ հարցերը կրկնվում են, մինչդեռ դրանք վերաբերում էին 2 միություններին: Բովանդակային վերլուծության արդյունքում մեր կողմից նկատվեց, որ շատ էին չհետաքրքրված անձիք, որոնք դրսևորում էին տոտալ անտարբերություն առհասարակ երկրում տիրող շրջադարձերին: Համեմատվել են ԵՄ-ից և Եվրասիական տնտեսական միությունից տեղեկացվածությունը, որից ստացված տվյալները ներկայացված են նկար 30-ում ( $p=,000$ ):



Նկար 30. ԵՄ-ից և Եվրասիական միությունից տեղեկացվածությունը

Հարկ է նշել, որ Եվրասիական Տնտեսական Միության վերաբերյալ տեղեկացվածության մեջ կար էական տարբերություն կախված կրթական աստիճանից: Բակալավրի կրթական աստիճան ունեցող երիտասարդները համեմատաբար ավելի տեղեկացված են Եվրասիական տնտեսական միությունից՝ ( $p= ,021$ ) (նկար 31): Ինչը ենթադրում ենք, որ կարող է կապված լինել նրա հետ, որ բակալավրի ուսանողները, անդամակցում են տարբեր կառույցների, հասարակական կազմակերպությունների, որոնք կարող են ապահովել համապատասխան տեղեկացվածություն:

Եվրասիական տնտեսական միության վերաբերյալ տեղեկացվածությունը ըստ կրթության



Նկար 31. Եվրասիական միության վերաբերյալ տեղեկացվածությունը ըստ կրթության

Ըստ բնակավայրի, զբաղվածության, ընտանեկան կարգավիճակի, մեր երկրում կազմակերպվող Եվրասիական տնտեսական միության սկզբունքների որդեգրմանն

ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկացվածության աստիճանի միջև տարբերություններ չկան:

Հետազոտվողները գնահատել են երկու միությունների կողմից առաջարկվող հնարավոր հեռանկարը իրենց և ՀՀ-ի համար: Արդյունքում ստացել ենք, որ կա մի սովոր զանգված այն երիտասարդների, ովքեր գտնում են, որ իրենց շահերի համար ավելի լավ է, որ երկիրը միանա ԵՄ-ին, կամ մնա նույնը, սակայն երկրի տնտեսական, քաղաքական զարգացման համար ավելի լավ կլինի, որ այն միանա Եվրասիական տնտեսական միությանը (նկար 32): Այս տվյալները կարելի է բացատրել այն հանգամանքով, որ բովանդակային մասում շատերը նշում էին, որ Եվրասիական տնտեսական միությունը կնպաստի տնտեսական զարգացմանը, սահմանների պաշտպանմանը և Ռուսաստանը դիտում էին որպես աջակից երկիր: Մինչդեռ նշում էին, որ ԵՄ-ն իրենց առաջարկում է աշխատանքնային և կրթական, իրավական, դեմոկրատական ավելի լավ հեռանկարներ: Չնայած որ հարցվողները նշել էին, որ տեղյակ չէին կազմակերպվող միջոցառումների մասին, սակայն բավականին տեղեկացված էին ԵՄ սկզբունքներից եւ արժեքներից: Մի մասն էլ նշում էին, որ երկրի համար ավելի լավ է, որ միանա ԵՄ-ին, իսկ իրենց համար՝ Եվրասիական տնտեսական միությանը, որի բացատրությունը դժվարանում ենք տալ, քանի որ նրանց կողմից չեն նշվել հիմնավորումներ ( $p = .000$ ):

	<i>Եվրասիական Միություն (իր համար)</i>	<i>ԵՄ (իր համար)</i>	<i>Նույնը (իր համար)</i>
<i>Եվրասիական Միություն (պետության համար)</i>	49	13	4
<i>ԵՄ (պետության համար)</i>	5	87	3
<i>Նույնը (պետության համար)</i>	2	6	84


*Նկար 32. Միությունների նախընտրությունը սեփական անձի և երկրի համար*

Պետության համար միություններից որևէ մեկին նախընտրություն տալը ըստ կրթության, բնակավայրի, զբաղվածության, ընտանեկան կարգավիճակի, եկամտի

աղբյուրի, նյութական բարեկեցության, արտերկրում բարեկամներ ունենալու փաստի տարբերություններ չկան:

Երիտասարդները իրենց ապագան կապում են մեծամասամբ երկրի՝ ԵՄ-ին միանալու ցանկության հետ (նրանց մեջ մեծ թիվ են կազմում բարձրագույն կրթություն ունեցողները՝ բակալավրները և մագիստրոսները), որը ինչպես նշեցինք ասոցացվում է դեմոկրատիայի, իրավական պաշտպանվածության, կրթական ոլորտի բավարարվածության հետ: Այս հարցի վերաբերյալ ստացված արդյունքները համեմատվել են էլնելով տարբեր կրթական աստիճաններից և ստացել ենք, որ էական տարբերություն կա միջին մասնագիտական կրթություն ունեցողների նախընտրության մեջ, ովքեր իրենց ապագան ավելի շատ կապում են Եվրասիական տնտեսական միության հետ, քան ԵՄ-ի (նկար 33): Ենթադրում ենք, որ դրանք այն երիտասարդներն են, ովքեր ունեն մասնագիտական հմտություններ որևէ արհեստի ոլորտում, որով և աշխատանք ավելի հեշտ կգտնեն Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու դեպքում՝  $p = ,024$ :

**Երիտասարդի՝ իր անձի համար միություններից մեկի նախընտրությունը կախված կրթական մակարդակից**




*Նկար 33. Երիտասարդի՝ իր անձի համար միություններից մեկի նախընտրությունը կախված կրթական մակարդակից*

Երիտասարդների՝ իրենց շահերի համար, միություններից որևէ մեկին նախընտրություն տալը ըստ բնակավայրի, զբաղվածության, ընտանեկան կարգավիճակի, եկամտի աղբյուրի, նյութական բարեկեցության, արտասահմանում բարեկամներ ունենալու փաստի տարբերություններ չկան:

Երիտասարդները գնահատել են ՀՀ-ի՝ միություններից որևէ մեկին անդամակցելու դեպքում ֆինանսական վիճակի փոփոխությունը: Էական տարբերություններ չեն նկատվել, սակայն ինչպես ներկայացված է նկար 34-ում ԵՄ-ին անդամակցելու դեպքում ավելի շատ են նշում, որ ֆինանսական վիճակը կբարելավվի, քան Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու դեպքում: Եվ համապատասխանաբար,

Եվրասիական տնտեսական միության դեպքում ավելի շատ նշում են, որ ֆինանսական վիճակը կվատանա, քան ԵՄ-ի դեպքում: Սա մենք կարող ենք բացատրել նրանով, որ հետազոտվողները առանձին-առանձին ոլորտները չէին քննարկում: Այսինքն, ունենալով կոնկրետ վերաբերմունք՝ վատ կամ լավ, որևէ միության հանդեպ այն տարածում էին բոլոր ոլորտների վրա: Բացի դա, հետազոտվողները հաճախ խոսելով ԵՄ-ի մասին նշում էին, որ անդամակցելու դեպքում կստեղծվի հավասար աշխատանքային պայմաններ, իրավահավասարություն, նոր բարեփոխումներ, որոնք կնպաստեն ֆինանսական բարեկեցության բարձրացմանը:


**Ֆինանսական բարելավումը ԵՄ-ին կամ Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելու դեպքում**



*Նկար 34. Ֆինանսական բարելավումը ԵՄ-ին կամ Եվրասիական միությանը անդամակցելու դեպքում*

Երիտասարդները գնահատել են նաև աշխատանքային պայմանների բարելավումը կախված տնտեսական միություններից որևէ մեկին անդամակցելու հանգամանքից: Զգալի տարբերություններ, ինչպես նախորդ դեպքում, չեն գրանցվել: Սակայն, կրկին նշում էին, որ ԵՄ-ին անդամակցելու դեպքում ՀՀ-ում աշատանքային պայմանները կբարելավվի: Նշենք, որ երիտասարդները ԵՄ-ն հաճախ ասոցացնում են առաջարկվող հավասար աշխատանքային պայմանների և հնարավորությունների հետ: Ինչն էլ ենթադրում ենք, որ կարող է լինել նման արդյունքների հիմնական պատճառ (նկար 35):


### Աշխատանքային պայմանների բարելավումը ԵՄ-ին կամ Եվրասիական միությանը անդամակցելու դեպքում



Նկար 35. Աշխատանքային պայմանների բարելավումը ԵՄ-ին կամ Եվրասիական միությանը անդամակցելու դեպքում

Էական տարբերություններ դուրս չեն բերվել նաև միություններին անդամակցելու դեպքում կրթական համակարգի բարելավման ոլորտում գնահատականների միջև: Սակայն նկար 36-ում երևում է, որ կրկին բարձր է գնահատվում Եվրամիությանը անդամակցելու դեպքում կրթական համակարգի բարելավումը: Ինչի պատճառը կարող է լինել այն, որ որպես ԵՄ-ի կողմից իրականացված հիմնական միջոցառում նշվում էր կրթական մի շարք եվրոպական ծրագրեր, ինչպիսիք են Erasmus Mundus-ը, Tempus-ը, Բոլոնյան համակարգի ներմուծումը և այլն: Շատերի կողմից որպես նպատակ էր նաև առանձնացվում որևէ եվրոպական երկրում կրթությունը շարունակելը կամ փոխանակման ծրագրերին մասնակցելը:


### Կրթական համակարգի բարելավումը ԵՄ-ին կամ Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելու դեպքում



Նկար 36. Կրթական համակարգի բարելավումը ԵՄ-ին կամ Եվրասիական միությանը անդամակցելու դեպքում

Իրավական պաշտպանվածությունը, գնահատելով որպես առաջնային ու կարևոր խնդիր, երիտասարդները հիմնավորում էին, որ ԵՄ-ի հիմնական սկզբունքներից է իրավական պաշտպանվածության բարձրացումը, և հետևաբար դրան անդամակցելու դեպքում այն կբարձրանա ՀՀ-ում: Այստեղից էլ, ենթադրում ենք, որ բխում է այն փաստը, որ ԵՄ-ին անդամակցելու դեպքում երիտասարդների 37,8%-ը գտնում են, որ իրավական պաշտպանվածության աստիճանը կբարձրանա (նկար 37):


**Իրավական պաշտպանվածությունը ԵՄ-ին կամ Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելու դեպքում**



*Նկար 37. Իրավական պաշտպանվածությունը ԵՄ-ին կամ Եվրասիական միությանը անդամակցելու դեպքում*

Չնայած այն հանգամանքին, որ շատ հաճախ հետազոտվողների մոտ Եվրոպան ասոցացվում էր համասեռամոլության հետ, ինչպես տեսնում ենք նկար 38-ում, ԵՄ-ին անդամակցելու դեպքում ընտանեկան բավարարվածության աստիճանը ավելի բարձր է գնահատվել: Ինչի պատճառ կարող է լինել այն, որ ընտանեկան բավարարվածությունը իր մեջ կարող է ներառել նաև ֆինանսական բավարարվածությունը, որը ինչպես տեսանք, ավելի բարձր է գնահատվել ԵՄ-ին անդամակցելու դեպքում: Բացի այդ, ինչպես տեսնում ենք, ընտանեկան բավարարվածությունը ցանկացած դեպքում նշված է, որ կմնա նույնը, ինչի պատճառ կարող է լինել այն, որ հետազոտվողների կողմից հաճախ նշվում էր, որ հայերը ունեն ընտանեկան այնպիսի արժեքներ, որոնք ամուր հիմքեր ունեն, և պետք է պահպանվեն ցանկացած միությանն անդամակցելու դեպքում:


**Ընտանեկան բավարարվածությունը ԵՄ-ին կամ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու դեպքում**



*Նկար 38. Ընտանեկան բավարարվածությունը ԵՄ-ին կամ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու դեպքում*

Հետաքրքրական է, որ այն դեպքում, երբ ՀՀ-ն չի անդամակցի որևէ միության, առողջապահության ցուցանիշները ավելի բարձր են, քան այն դեպքում, երբ այն կանդամակցի Եվրասիական տնտեսական միությանը: Սա կարելի բացատրել նրանով, որ Եվրասիական տնտեսական միությունը իր հիմնական սկզբունքների մեջ չունի առողջապահությանն ուղղված ռազմավարություն: Ինչպես նաև տեսնում ենք, որ ԵՄ-ին անդամակցելու դեպքում առողջապահական համակարգը կլավանա: Այսպիսի տեսակետը նկատելի էր նաև բովանդակային վերլուծության մեջ, քանի որ առողջապահության ոլորտում աշխատողների մեծ մասը ցանկանում էին տեղափոխվել եվրոպական որևէ երկիր, հիմնավորելով, որ այս ոլորտը զարգացած է:

**Առողջապահական համակարգի բարելավումը ԵՄ-ին կամ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու դեպքում**




*Նկար 39. Առողջապահական համակարգի բարելավումը ԵՄ-ին կամ Եվրասիական միությանն անդամակցելու դեպքում*

Մեր կողմից իրականացված հետազոտության ընթացքում, հետազոտվողները նշել են նաև, թե ըստ իրենց ՀՀ-ն ինչպիսի արտաքին քաղաքականություն է վարում: Ստացված արդյունքները ներկայացված են նկար 40-ում: Համաձայն որի, մեծամասնությունը

հակված են այն կարծիքին, որ Հայաստանը սերտ հարաբերությունների մեջ է ԱՊՀ երկրների հետ: Ըստ երիտասարդների, Հայաստանը ամենաքիչը համագործակցում է ԵՄ-ի հետ:


**ՀՀ-ի արտաքին քաղաքականությունը ըստ երիտասարդների**



*Նկար 40. ՀՀ-ի արտաքին քաղաքականությունը ըստ երիտասարդների*

Այս արդյունքները համեմատվել են արտերկրում բարեկամներ ունենալ/չունենալու հետ: Դուրս է բերվել, որ էական տարբերություն կա այն հետազոտվողների մոտ, ովքեր չունեն բարեկամներ արտերկրում, որոնց պատասխաններում, ի տարբերություն մյուս հետազոտվողների, գերակշռում էր այն կարծիքը, որ ՀՀ-ն ավելի շուտ վարում է Ճկուն քաղաքականություն երկու միությունների միջև կամ ընդհանրապես ուղղվածություն չունի՝  $p = ,006$ : Արդյունքները ներկայացված են նկար 41-ում:

**ՀՀ-ի որդեգրած քաղաքականության ընկալումը կապված արտերկրում բարեկամեր (չ)ունենլու հանգամանքի հետ**



*Նկար 41. ՀՀ-ի որդեգրած քաղաքականության ընկալումը կապված արտերկրում բարեկամեր (չ)ունենլու հանգամանքի հետ*


Այդ հարցը դիտարկել ենք նաև ըստ բնակավայրի, կրթության և էական տարբերություններ դուրս չենք բերել: Այն հարցը, թե որքանով է հայ երիտասարդը համաձայն Հայաստանի Հանրապետության որդեգրած քաղաքականությանը, դիտարկել ենք ըստ ընտանեկան կարգավիճակի, զբաղվածության, կրթության, բնակավայրի և եկամտի աղբյուրի: Գնահատումը իրականացրել են 5 բալանոց համակարգով, որտեղ 5-ը



լիովին համաձայնության ցուցանիշն է, իսկ 1-ը՝ անհամաձայնության: Տարբերություններ չեն նկատվել ըստ ընտանեկան կարգավիճակի, զբաղվածության և եկամտի աղբյուրի:


Տարբերություններ նկատել ենք համապատասխանաբար ըստ կրթության և բնակավայրի: Նկար 42-ում ներկայացված է երիտասարդների համաձայնությունը Հայաստանի Հանրապետության վարած քաղաքականության հետ: Արդյունքներից պարզ է դառնում, որ Երևանը (M=2,37), հետո արդեն Գյումրին (M=2,46) համաձայնության ամենացածր ցուցանիշներն են դրսևորում Հայաստանի Հանրապետության վարած քաղաքականության հետ: Ընդ որում, ցուցանիշները ցածր են անգամ ընդհանուր միջին գործակցից (միջին գործակիցը՝ 2.58): Գյումրիի համաձայնության ցածր աստիճանը կարելի է կապել մեր՝ արդեն ստացած այն արդյունքի հետ, համաձայն որի, ի տարբերություն մյուս քաղաքների Գյումրին ամենաքիչն է կարևորել Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելու հանգամանքը:

**Երիտասարդների համաձայնությունը ՀՀ-ի վարած քաղաքականությանը**



*Նկար 42. Երիտասարդների համաձայնությունը ՀՀ -ի վարած քաղաքականությանը*

Ըստ կրթական աստիճանի նշանակալի տարբերություններ են առանձնացվել միջնակարգ (M=3,20) և միջին մասնագիտական կրթություն ունեցողների (M=2,33) մոտ: Համաձայն նկար 43-ի, միջին մասնագիտական կրթություն ունեցողների համաձայնության ցուցանիշները ավելի բարձր են, քան միջնակարգ կրթություն ունեցողներինը:



*Նկար 43. Երիտասարդների համաձայնությունը ՀՀ-ի վարած քաղաքականությանը ըստ կրթական աստիճանի*

Նման արդյունքը կարող ենք կապել մեր նախորդ ստացված արդյունքների հետ, որտեղ նշվում էր, որ միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդները գրեթե բոլոր ոլորտներում բավարարվածության բարձր ցուցանիշներ ունեին, համեմատած միջին մասնագիտական կրթություն ունեցող երիտասարդների: Ինչն էլ հանգեցնում է հետևյալին, որ միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդները ավելի համաձայն են մեր երկրի որդեգրած արտաքին քաղաքականության հետ:

Այսպիսով, հիմանականում երիտասարդների մոտ տեղեկացվածության աստիճանը ցածր է երկրում ընթացող սոցիալ-տնտեսական, քաղաքական հարցերի շուրջ: Հետազոտվողների 90.5 %-ը տեղյակ չեն երկրում իրականացվող, ԵՄ սկզբունքների որդեգրմանն ուղղված միջոցառումներին: Սակայն տարբերություններ նկատելի էին ըստ բնակավայրի և կրթական աստիճանի: Համապատասխանաբար, Գյումրիում երիտասարդները համեմատաբար տեղյակ էին իրականացվող միջոցառումներին, իսկ Եվրասիական տնտեսական միության մասին ավելի տեղեկացված էին Բակալավրում սովորող ուսանողները:

Հիմնականում երիտասարդները իրենց ապագան տեսնում էին ԵՄ կազմում, իսկ երկրի ապագան՝ Եվրասիական տնտեսական միության, ընդ որում միջին մասնագիտական կրթություն ունեցողները նախընտրում էին անդամակցել Եվրասիական տնտեսական միությանը: Երիտասարդների 44.5%-ը կարծում են, որ Հայաստանը սերտ հարաբերություններ է պահպանում ԱՊՀ երկրների հետ: Ընդ որում Հայաստանի վարած նման քաղաքականության հետ ամենաքիչն էին համաձայն Երևան և Գյումրի քաղաքների երիտասարդները: Իսկ այն երիտասարդները, ովքեր դրսում

բարեկամներ չունեն կարծում էին, որ Հայաստանը ճկուն խաղ է վարում երկու միությունների հետ:

### **Հետազոտության բովանդակային վերլուծություն**

Մեր հարցաթերթը ներառում էր իր մեջ բաց հարցեր, որոնք մեր կողմից ենթարկվել են որակական վերլուծության: Որակական վերլուծության միջոցով դուրս ենք բերել հետևյալ հիմնական բաժինները՝

- Գործունեության այն ոլորտը, որտեղ տեսնում է իրեն հայ երիտասարդը
- Այն երկիրը, որի հետ կապում կամ չի կապում իր ապագան, և այդ որոշումը պայմանավորող գործոնները
- Հետաքրքրվածությունը երկրում տիրող տնտեսական, քաղաքական տեղաշարժերով
- Տեղեկացվածությունը խնդրի վերաբերյալ

Այժմ ներկայացնենք ավելի մանրամասն:

Համաձայն նրա նախընտրելի երկրի, երիտասարդները նշել են նաև այն գործունեության ոլորտը, որում տեսնում են իրենց: Ընդհանրացնելով այն բոլոր տարբերակները, առանձնացրել ենք ամենաշատ հանդիպող վեց գործունեության ոլորտները՝

1. Բիզնես
2. Կրթական ոլորտ
3. Աշխատանք հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների) ոլորտում
4. Արվեստ
5. Բժշկություն
6. Հաշվապահություն

Մի խումբ երիտասարդներ, ովքեր իրենց ապագան կապում էին արտասահմանի հետ և հստակ չէին նշում գործունեության ոլորտը, հիմնավորում էին, որ <<կարևորը գնալն է, իսկ անելիքը այնտեղ պարզ կդառնա>>:

Տարբերությունները հստակ պատկերացնելու համար հետազոտվողներին պայմանականորեն բաժանեցինք չորս հիմնական խմբի ըստ նախընտրելի երկրի և գործունեության ոլորտի.

- Նրանք, ովքեր մնում են Հայաստանում և հիմնավորում, որ իրենց հայրենի հողն է և իրենց տեղն այստեղ է:

- Նրանք, ովքեր իրենց ապագան կապում են Հայաստանի հետ հիմնական գործունեության ոլորտը բիզնեսն ու ՀԿ-ների աշխատանքներն են:

- Երրորդ խումբ երիտասարդները իրենց ապագան տեսնում են արտասահմանում, որոնց մեջ գերակշռող մասը արվեստագետներ, բժշկության ոլորտի մասնագետներ են, ովքեր հիմնավորում են, որ այնտեղ տվյալ ոլորտները զարգացած են:

- Երիտասարդների մի մասն էլ ընտրում է արտասահմանյան որևէ երկիր պատճառաբանելով, որ այնտեղ բարեկամներ ունեն կամ իրենց երազանքների երկիրն է:

Հաջորդ խնդիրը, որին անդրադարձանք, երկրի տնտեսական, քաղաքական տեղաշարժերով հետազոտվողների հետաքրքրվածության աստիճանն էր: Մեզ պարզ դարձավ, որ երիտասարդների շրջանում մեծ մասը չի հետաքրքրվում երկրում տեղի ունեցող տնտեսական, քաղաքական անցուդարձով, ինչի վկայությունն է մեծ քանակով հարցաթերթերը, որոնք ընդհանրապես լրացված չէին կամ ուղղակի նշված էր, որ իրենց չի հետաքրքրում, դրանց թիվը 450 հարցաթերթերի մեջ կազմում էր 43, որոնք քանակական վերլուծության ընթացքում մենք հաշվի չենք առել: Այս հանգամանքը կարող է պայմանավորված լինել ինչպես տարիքային առանձնահատկություններով, այնպես էլ նրանով, որ երիտասարդը ամեն կերպ խույս էր տալիս քաղաքական թեմայով ցանկացած քննարկմանը: Այս հանգամանքը առավել սուր արտահայտում ուներ մարզերում, մասնավորապես Իջևանում, որտեղ երիտասարդները անգամ <<վախենում>> էին <<բարևելուց>>: Ինչը վկայում է այն մասին, որ երիտասարդը դեռ պատրաստ չէ քաղաքական հարցերի շուրջ <<ազատ>> քննարկումներին:

Եվս մեկ բավական շատ տարածված պատասխան՝ ուղղակի <<չգիտեմ>>: Վերջինիս ապացույցն այն է, որ հարցվողների մեծամասնությունը կամ պարզապես նշում էր, որ տեղյակ չի կամ էլ առաջանում էր տերմինային շփոթ. չէին տարբերում ԵՄ-ն Եվրասիական տնտեսական միությունից: Բայց տեղեկացվածների շրջանում ընդհանուր առմամբ ավելի իրազեկ էին ԵՄ-ից: Ընդհանրացնելով նրանց կողմից նշված հիմնական բնորոշումները կարող ենք դուրս բերել հետևյալ սահմանումը, որ ԵՄ-ն 28 անդամ երկրների միավորում է, որոնք ունեն մեկ տնտեսական, իրավական, քաղաքական դաշտ՝ ուղղված համընդհանուր զարգացմանը: Իսկ Եվրասիական տնտեսական միությունը սահմանում էին որպես տնտեսական համագործակցություն Ռուսաստանի

զլիավորությամբ, որի նպատակը ազատ շուկայական հարաբերությունների հաստատումն է անդամակցող երկրների միջև:

Հիմնականում ուղղակի սահմանումներ քիչ էին տրվում: Ավելի շատ երիտասարդները գրում էին իրենց վերաբերմունքի, սուբյեկտիվ պատկերացումների մասին: Ու հիմնականում սահմանումների, սկզբունքների ներկայացման փոխարեն նշում էին իրենց սեփական ասոցիացիաները: ԵՄ-ի հետ կապված հիմնական ասոցիացիաներն են՝

- Դեմոկրատիան
- Իրավահավասարությունը
- Կրթական ոլորտի լայն հնարավորությունները
- Համասեռամոլությունը
- Գենդերային հավասարությունը և այլն:

Եվրասիական տնտեսական միության հետ կապված հիմնական ասոցիացիաներն են՝

- Ընդհանուր շուկան, մաքսային սահմանները
- Աջակից երկիրը
- Դառնալ Ռուսաստանի մարզ, ստրուկ
- <<մոդեռն>> ԽՍՀՄ-ի ստեղծումը
- Ինքնորոշման կորուստը
- Բիզնես հարթության ընդլայնումը:

Կախված նրանից, թե որտեղ են տեսնում իրենց հայ երիտասարդները և ինչ պայմաններ են կարևորում, այն հարցին, թե ինչ են առաջարկում մեզ այս միությունները պատասխանները շատ տարբեր էին զարգացման հնարավոր հեռանկարներից մինչև ստրկացում և լճացում: Քիչ չէին նաև այն պնդումները, համաձայն որոնց Հայաստանի համար լավագույն տարբերակը և ոչ մեկին չանդամակցելն է, քանի որ երկու դեպքում էլ ազգապահպանման խնդիրն առաջնային է: Դա ապացուցում է այն, որ հետազոտվողներից շատերը, քննարկելով այս երկու միությունների դրական և բացասական կողմերը, մեզ առաջարկվող արժեքները, նշում էին, որ հայ ազգը չպետք է միանա որևիցե մեկին, կամ էլ համագործակցության արդյունքում ամուր պահի սեփական արժեքները:

## Փորձագիտական հարցման արդյունքների վերլուծություն

Հետազոտության իրականացման երրորդ մասը ենթադրում է ոլորտի փորձագետների հետ հարցազրույցի կազմակերպում մեզ հուզող հարցերի և դրանց պատճառաբանությունների շուրջ: Հարցազրույցը իրականացվել է այն հարցերի շրջանակներում, որոնք, ըստ մեր՝ արդեն իսկ կազմված հարցարանի, հնարավորություն կտային վերլուծել մեզ հուզող խնդիրները տարբեր դիտանկյուններից:

Ինչպես արդեն նշել ենք հարցումը իրականացվել է տասը փորձագետների հետ, յուրաքանչյուր ոլորտից երկուական ներկայացուցիչներ՝

- Կրթության ոլորտի մասնագետ
- Քաղաքագետ,
- Հոգեբան
- Աշխատանքի ոլորտի մասնագետ
- Լրագրող

Մասնագետների հետ հարցազրույցի ժամանակ մեր առջև դրել էինք խնդիր՝ հստակեցնել երիտասարդներ հիմնական նպատակները (ամենաշատը հանդիպող), այդ նպատակների ուղղվածությունը, հայ երիտասարդի կյանքի ընդհանուր գնահատումը և բավարարվածությունը, ընդհանուր հետաքրքրվածությունը երկրում տիրող սոցիալական, տնտեսական, քաղաքական հարցերի վերաբերյալ:

*ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ*

Ընդհանուր առմամբ մեր փորձագետները երիտասարդների նպատակները հստակ չէին առանձնացնում, նշելով, որ դժվար է նման բաժանումներ անել, քանի որ մեզ մոտ երիտասարդները շատ տարբեր են: Ունենք *գաղափարականներ, հայրենանվերներ, հիմա արդեն օր օրի մեծացող քանակով հեռացողներ, աննպատակ երիտասարդներ*, ովքեր բացի գոյության պահպանումից ոչնչով չեն հետաքրքրվում: Հիմնականում մեր փորձագետները գնահատել են նպատակների իրականացումը կախված իրենց մասնագիտական ոլորտի պահանջներից: Բայց, որպես ընդհանուր տարբերակներ, առանձնացրել ենք հետևյալը, որ երիտասարդների նպատակների իրականացումը կախված է նախևառաջ իրենցից, հետո արդեն ընտանեկան աջակցությունից, կրթական համակարգից, երկրի սոցիալ-տնտեսական պայմաններից, առաջարկվող աշխատանքային պայմաններից և այլն: Քաղաքագետներից մեկը նշում էր, որ մեզ մոտ

շատ են երիտասարդներ, ովքեր կարևորում են «բախտի» գործոնը՝ հիմնվելով իռացիոնալ բացատրությունների վրա: Դա հնարավոր է, որ պայմանավորված է նպատակի գնահատման հնարավորությունների սահմանափակությամբ կամ ոչ իրատեսական նպատակադրմամբ:

*Կրթության ոլորտի փորձագետներից մեկը նշում է՝ «մենք չունենք ուսանողության մեջ շահ և հետևաբար ձևավորված շահի և տրամադրությունների մասին հնարավոր չի խոսել: Կարող ենք խոսել միայն անհատական շահերի մասին»:*

*Նա առանձնացնում էր երկու խումբ երիտասարդների՝ «առաջին խումբը այն երիտասարդներն են, որոնց համար կրթությունը արժեք է և ուղղված են որակյալ կրթություն ստանալուն և իրենց ապագան տեսնում են եվրոպական բուհերում, մյուս խումբ երիտասարդները մոտիվացված չեն կրթությամբ, որոնք էլ իրենց հերթին երկու տիպի են լինում՝ երիտասարդներ, ովքեր սոցիալական, քաղաքական ակտիվություն չեն դրսևորում, և երիտասարդներ, ովքեր տեսնում է իրենց ապագան այստեղ, միանալով որոշակի կառույցների, ինչի շնորհիվ նրանք իրենց նպատակներին հասնելու համար շատ խոչընդոտներ ստիպված չեն լինի հաղթահարել: Կան մի խումբ երիտասարդներ էլ, որ ցանկանում են մնալ այստեղ, սակայն մասնագիտական գիտելիքը կիրառվում է նեղ ոլորտում, որտեղ հանդիպում են խոչընդոտների և/ կամ մնում են այստեղ, կամ էլ մեկնում են արտասահման»:*

Ե՛վ հոգեբանները, և՛ քաղաքագետները, և՛ աշխատանքի ոլորտի մասնագետները երիտասարդների շրջանում առանձնացնում են երեք հիմնական նպատակներ՝ *աշխատանք, ուսում և ընտանիք*: Որոնք առաջնային նպատակներ էին նաև մեր հետազոտվողների մեծամասնության մոտ: Քաղաքագետի կարծիքով հիմնականում երիտասարդները փորձում են գտնել իրենց տեղը աշխատանքում, տարբեր հարաբերություններում: Շատերը համապատասխան տեղեկացվածություն չունեն իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, հետևաբար հաճախ է առաջանում շփոթ աշխատանքային, քաղաքացիական դրսևորման տարբեր ոլորտներում: ՉԼՄ ներկայացուցիչները՝ որպես նպատակներին հասնելու հիմնական խոչընդոտներ, նշում են սոցիալական դժվարությունները, նպատակներին հասնելու «սխալ» ճանապարհների ընտրությունը, բացասական լիցքի առկայությունը: Եվ շատ հաճախ այն ինֆորմացիան, որ ներկայացվում է երիտասարդներին լրատվության միջոցով հիմնված է ոչ ամբողջովին վերլուծված և հաճախ նույնիսկ իրականությունը

աղավաղող տվյալների վրա: Այդ առումով լրատվության կազմակերպումն ու ուղղորդումը ևս լուրջ խնդիր է: Արդյունքում երիտասարդին դժվար է կողմնորոշվել և *գտնել* այն ինֆորմացիան, որը համապատասխանում է իրականությանը, որի բացակայությունը տարաբնույթ հակասությունների ու անհամաձայնությունների առիթ կարող է լինել:

Ընդհանուր առմամբ գրեթե բոլոր փորձագետները նշում էին, որ երիտասարդների մի զանգված խոչընդոտները հաղթահարելու ճանապարհ որպես ընտրում են արտերկիր մեկնելը: Իսկ մնացածը նախընտրում են մնալ Հայաստանում տարբեր պատճառներով: Հոգեբանները, այն հարցին, թե որքանով է հայ երիտասարդը համաձայն ներկայիս ՀՀ-ի վարած քաղաքականությանը, ելնելով երիտասարդների արձագանքից ու մեկնաբանություններից, հաստատում են՝ *«կա ձևավորված մի միտում՝ բոլորը հիմա բողոքում են. Տեղին -անտեղին բոլորը դժգոհ են: Բայց սրան զուգահեռ ունենք երիտասարդներ, ովքեր վերլուծող են ու իրենց յուրաքանչյուր նախաձեռնություն կշռադատված քայլերի և ամուր հիմքերի վրա է կառուցված»:*

Այն հարցին, թե որտեղ է տեսնում իրեն հայ երիտասարդը ԶԼՄ-ի ներկյացուցիչները պատասխանել են՝ *«քանի դեռ հայը այստեղ ունի կապող հանգամանքներ (ընտանիք, գերեզմաններ, և ինչպես շատ հաճախ հետազոտվողներն էին նշում մեր հողը) նա երբեք չի լքի Հայաստանը»:* Մինչդեռ կրթության ոլորտի մասնագետները նշում էին՝ *«երիտասարդները ունեն շատ լավ զարգացած ինտուիցիա և նույնիսկ հիմնավոր պատճառներ չունենալով զգում են երկրի վիճակը, ինչն էլ պայմանավորում է մեծամասնության ցանկությունը դուրս մեկնելու»:*

Աշխատանքի ոլորտի մասնագետների կարծիքով այն երիտասարդները, ովքեր արտերկրում մասնագիտական առաջընթացի ավելի մեծ հնարավորություններ են տեսնում և դժգոհ են ՀՀ-ում ունեցած հնարավորություններից իրենց ապագան տեսնում են ԵՄ երկրներում կամ ԱՄՆ-ում: Ընդ որում ուսանողության շրջանում այն, բավական ակտիվ ու օր օրի աճող օղակն է:

Այսպիսով, կապված հայ երիտասարդի նպատակների, դրանց իրականացման պայմանների, ուղղվածության վերբերյալ մասնագետների դիտարկումները ևս միանաշանակ չէին: Կարող ենք ասել, որ մեր երիտասարդությունը *համախուռն զանգված* է, որտեղ ներքին խմբավորումներ կան կապված իրենց իսկ նպատակների և



ցանկալի կյանքի մոդելի ստեղծման հետ: Երևի դա էլ հենց պատճառն է երիտասարդության տարբեր շերտերի մեջ առկա տարաբնույթ հակասությունների:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԻ ԿՅԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՐԱԿՈՎ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ:

ԿՅԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Կյանքի կազմակերպման, պլանավորման, առհասարակ կյանքի սցենարի կազմման վերաբերյալ մեր փորձագետները հետևյալ եզրակացություններն են դուրս բերել, որպես կյանքի սցենարի կազմման երեք հիմնական ռազմավարական ելքեր՝

1. Հարմարվել խաղի կանոններին, անգամ չուզենալով, օրինակ կուսակցություն մտնելը որպես հարմարման ձև,
2. Փրկությունը տեսնել երկրի սահմաններից դուրս, որովհետև թվում է այնտեղ ամեն ինչ լավ է, իսկ այնտեղից վերադառնալը ձախողելու խոստովանություն է
3. Այս խումբը կազմում են ՀՀ-ում մնացողները, ովքեր փորձում են ինչ որ բան փոխել, որոնց մեջ կան և՛ *համառներ*, և՛ *հիասթափվողներ*:

Պայմանավորված հնարավոր ելքերից մեկի ընտրությամբ, կյանքի կազմակերպումը ընթանում է համապատասխան ուղղությամբ:

Փորձագետների գնահատմամբ երիտասարդների բավարարվածության և սպասումներին համապատասխանության աստիճանը էականորեն չի տարբերվում մեր՝ արդեն իսկ ստացած արդյունքներից: Այսինքն, հիմնականում երիտասարդների մոտ բարձր է սպասումների մակարդակը, քան ընդհանուր առմամբ բավարարվածությունը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ,

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

Մեզ հետաքրքրում էր նաև հայ երիտասարդի, որպես հասրակական, քաղաքական ոլորտի ակտիվ գործող կամ հակառակը, սուբյեկտի վերաբերյալ մասնագետների մեկնաբանությունները:

Եվ այն հարցին, թե որքանով է հայ երիտասարդը հետաքրքրվում և հետևաբար տեղեկացված երկրում տիրող սոցիալ տնտեսական, քաղաքական տեղաշարժերով ԶԼՄ-ի ներկայացուցիչը նշում է, որ բավականին հետաքրքրված զանգված կա, որը չի սահմանափակվում ֆեյսբուքով, սակայն նրանք փոքրամասնությունն են կազմում: Քաղաքագետը, ելնելով իր փորձից նշում է, որ երիտասարդները հիմնականում հետաքրքրվում են, քանի որ վերաբերում է իրենց սոցիալական կարգավիճակին, իրենց

իրավունքներին, ընդ որում դա ևս համատարժ բնույթ չունի: Ըստ կրթության ոլորտի մասնագետների, տղաների մի մեծ խումբ բավականին ակտիվ է, մասնակցում են տարբեր շարժումներին: Բայց էլի ընդհանուրի մեջ մեծ քանակ չեն կազմում: Բացի դա խնդիրը քանակի մեջ չէ, կարևորը ինչ որակով և ոգևորվածությամբ են հետևում: Իսկ հետևելու համար պետք է միջավայր, որտեղ կկարողանա երիտասարդը վերլուծել իրավիճակը, ընդհանուր պատկերը: Ինտերնետից դուրս պատկերը տեսանելի չէ, իսկ ինտերնետում՝ աղբ է:

*Հնչեց ևս մեկ հետաքրքիր բացատրություն, որ երիտասարդների մի մասը ակտիվ է իսկ մյուս մասը մասնակցում է, որ այդ առաջին խումբը չմասնակցի: Այսինքն՝ ակտիվ երիտասարդների խումբն էլ միատարր չէ: Դա իհարկե պայմանավորված է հայացքների տարբերությամբ: Իսկ մեր երկրի հաջողությունները կապված են առաջին խմբի հետ:*

Ինչ վերաբերում է կոնկրետ ԵՄ-ի և Եվրասիական տնտեսական միության հարցերի վերաբերյալ երիտասարդների դիրքորոշումներին, ապա, ըստ ՋԼՄ-ներկայացուցիչների, դիլեման ԵՄ-ի և Եվրասիական տնտեսական միության, երիտասարդների մոտ չկա դրված: Մի մասը գնում է *մոդայի* հետևից, մյուսը՝ նյութականի: Նրանց հիմնական խնդիրներին տեղեկացնող ու մեկնաբանող չկա: Եվ դա է առաջին խնդիրը կապված իրազեկվածության հետ:

Մեր հետազոտվողների և նաև մասնագետների վերլուծությունները ընդհանուր եզրեր ունենին համաձայն որի ՀՀ-ն ապագան տեսնում է ԵՄ հետ, հաշվի առնելով ինտեգրման դրական արդյունքները: Իսկ Եվրասիական տնտեսական միության հետ չի տեսնում ապագա, որովհետև շատ հարցեր անհասկանալի են և հակազգազային: Դրա հետ կապված և հաճախ հաստատվող տեսակետ է, որ գիտակից անհատը դժվար թե ուզենա միանալ Եվրասիական տնտեսական միությանը, պայմանավորված նրանով, որ ԵՄ-ն առաջարկում է, հետազոտվողների պատասխաններում հաճախ կրկնվող արժեքները, մշակույթը, ազատությունը, դեմոկրատիան, իսկ Եվրասիական տնտեսական միությունը մեզ միայն ռազմաքաղաքական տեսանկյունից է պետք:

Բացի դա, կա մի կարևոր խնդիր, որին ևս մասնագետներն անդրադարձան: Դա կապված է տեղեկացվածության հետ, մասնագետները կարծում են, որ երիտասարդները լավ չեն պատկերացնում Եվրոպան եվ գերագնահատված արժեքներ են վերջինիս վերագրում, Ռուսաստանին էլ դիտում են որպես ռազմական տեսանկյունից աջակից երկիր: Մինչդեռ պետք է ամբողջության մեջ հասկանալ երևույթները ու հնարավորինս

զերծ մնալ տպավորությունների ազդեցության ներքո որոշումներից և կարծիքների ձևավորումից:

Կրթության ոլորտի մասնագետները նշում են, որ Եվրոպան որոշակի քաղաքական մշակույթ է տարածում, սա չի նշանակում, որ Եվրոպայում ավելի լավ է: Խնդիրը այն է, թե որտեղ կան մեխանիզմներ երկրում ծառայած խնդիրները լուծելու համար, իսկ Եվրասիական տնտեսական միությունում մեխանիզմներ չկան: ԵՄ-ն և Եվրասիական տնտեսական միությունը երկու տարբեր փիլիսոփայություններ են, որոնցում մի դեպքում դրված է անհատական, մյուսում՝ հասարակության շահը:

Փորձագետները անդրադարձան նաև այն փաստին, որ մեր երիտասարդների մոտ կան նաև ընդհանուր դրսևորվող անտարբերություն, անհետաքրքրություն երկրում առկա հասարակական, տնտեսական հարցերի վերաբերյալ (ինչը փաստում է նաև հետազոտության ընթացքում մեծ թվով հետ վերադարձված դատարկ հարցաթերթերը կամ գրված, որ երկրում տիրող վիճակը իրենց չի հետաքրքրում): Դա կարելի է բացատրել օրինակ երկրի նկատմամբ վստահության, հավատի ցածր աստիճանի դրսևորմամբ կամ էլ բացակայությամբ, որի արդյունքում երիտասարդը ընտրում է ամենահեշտ տարբերակը՝ չհետաքրքրվել և հեռու մնալ նման հարցերի քննարկումներից: Այն, թե ինչու հիմնականում երիտասարդները չեն հետաքրքրվում երկրում տիրող հարցերով, հոգեբաններից մեկն էլ նշել է՝ *«հայրենասիրությունը, երկրում առկա խնդիրներով հետաքրքրվելը չէ, ոչ էլ գոռալ, որ մենք հայրենասեր ենք: Ամեն ինչ փոքր քայլերի մեջ է ու ամենևին պարտադիր չէ իմանալ այս միությունները ու համարվել երկրի հարցերով մտահոգվող, մենք ունենք դեռևս շատ չլուծված կենսական հարցեր, որոնք այսօր դեռ ակտուալ են մեր երիտասարդների համար»:*

Հետևաբար, երիտասարդների ակտիվ ինտեգրումը երկրում տիրող սոցիալ-տնտեսական, քաղաքական հարցերի քննարկումներին միառժամանակ չի կարող լինել: Պետք է ժամանակի ընթացքում *փոքր քայլերով* յուրաքանչյուր երիտասարդի մոտ ձևավորվի այն գիտակցումը, որ լինելով հասարակության մի օղակ, ինքն էլ ունեմ իր պարտականությունները ու պետք է կատարի դրանք:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Հայ երիտասարդները, որպես ամենակարևոր նպատակներ, առանձնացրել են հետևյալ վեցը՝

- ✓ Ուսում
- ✓ Աշխատանք
- ✓ Ընտանիք
- ✓ Ճանապարհորդություն
- ✓ Ձեռքբերումներ
- ✓ Մեկնել արտասահման

Ընդ որում ըստ կարևորության առաջին տեղում աշխատանքն է: Հայ երիտասարդը իր նպատակների իրականացումը կապում է իր իսկ անձի, կրթության հետ, չբացառելով, որ երկրում տիրող սոցիալ-տնտեսական, քաղաքական իրադրությունը, որոշակի դեպքերում ընդհանրական ազդեցություն ունենում է: Ընդ որում 59.40% երիտասարդները, ցածր գնահատելով իրենց բավարարվածության աստիճանը, սպասելիքներին համապատասխանությունը, նախընտրում են ապրել ու աշխատել Հայաստանում: Հիմնավորումները տարբեր են՝ կախված ընտանեկան կարգավիճակից, զբաղվածության տեսակից և բնակավայրից:

2. Հայ երիտասարդների՝ մասնավորապես մագիստրոսների մոտ, ցածր է ընդհանուր կյանքի որակով բավարարվածության մակարդակը, ինչպես նաև՝ սպասումներին համապատասխանությունը: Կրթական աստիճանով պայմանավորված, մագիստրոսները, իրավական պաշտպանվածության, կրթական ոլորտին առնչվող հարցերում, ունեն ավելի շատ սպասելիքներ, քան միջնակարգ կրթություն ունեցողները, հետևաբար բավարարվածությունը և սպասումների համապատասխանությունը նրանց մոտ անհամեմատ ավելի ցածր է: Եվ գուցե, այժմ այդքան տարածված միգրացիան, կապված է այն փաստի հետ, որ երիտասարդները իրավական պաշտպանվածությունը և ընդհանուր բարեկեցության աստիճանը Հայաստանում ցածր են գնահատում: Սակայն այն ունի դեռևս ուսումնասիրման կարիք: Տարբերությունները նկատելի են ըստ զբաղվածության և եկամտի աղբյուրի:

3. Հիմնականում հայ երիտասարդների տեղեկացվածության աստիճանը ցածր է երկրում ընթացող սոցիալ-տնտեսական, քաղաքական հարցերի վերաբերյալ: Հետազոտվողների 87.40%-ը տեղյակ չեն ո՛չ Եվրոպական Միության, ո՛չ էլ Եվրասիական Տնտեսական Միության մասին: Մեծամասամբ տեղյակ չէին նաև այն միջոցառումներից, որոնք իրականացրել էին համապատասխան միությունները: Տարբերություններ նկատելի էին ըստ բանակավայրի և կրթական աստիճանի: Սակայն համեմատության մեջ հիմնականում երիտասարդները իրենց ապագան տեսնում էին ԵՄ կազմում, իսկ երկրի ապագան՝ Եվրասիական Միության: 44.50% երիտասարդներ կարծում են, որ Հայաստանը սերտ հարաբերություններ է պահպանում ԱՊՀ երկրների հետ: Ընդ որում Հայաստանի վարած նման քաղաքականության հետ հիմնականում երիտասարդները համաձայն չէին, մասնավորապես՝ Երևան և Գյումրի քաղաքի երիտասարդները:

Այսպիսով, հայ երիտասարդի և ըստ երիտասարդի երկրի ապագայի հեռանկարները ընդհանուր առմամբ չեն համընկնում: Երիտասարդների մեծամասնությունը նախընտրում է մնալ Հայաստանում, սակայն Հայաստանում մնալու արժեքային կողմնորոշումները, հիմնավորումները բավական տարաբնույթ են, հաճախ նաև անորոշ:

**Հավելված**

**ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՅՈՒՄՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հետազոտությունը պահպանում է անանունության սկզբունքը և արդյունքները ներկայացվելու են ընդհանրացված տարբերակով:

ՄԱՍ I- Ստորև ներկայացված հարցերը թույլ են տալիս բացահայտել Ձեր մոտակա նպատակները և դրանց իրականացման պայմանները: Խնդրում ենք հարցերին պատասխանել հնարավորինս անկեղծ:

1. Խնդրում ենք լրացնել ստորև ներկայացվող աղյուսակը

1.1 Թվարկեք ձեր նպատակները առաջիկա 5 տարիների համար՝ դասակարգելով ըստ կարևորության (ամենավերևում՝ ամենակարևորը, ամենաներքևում՝ ամենաքիչ կարևորություն ունեցողը)	1.2 Յուրաքանչյուր նպատակի համար գնահատեք դրա իրատեսական լինելը (1-ը ամենաանիրատեսական, 5-ը ամենաանիրատեսական):
	1 2 3 4 5
	1 2 3 4 5
	1 2 3 4 5
	1 2 3 4 5
	1 2 3 4 5

2. Այդ նպատակների իրականացումը կախված է (նշեք ոչ ավել, քան 2 պատասխան).

- Միայն ինձնից
- Ընտանիքի աջակցությունից
- Երկրի տնտեսական-քաղաքական իրավիճակից
- Կրթական համակարգից
- Առաջարկվող աշխատանքի պայմաններից և հեռանկարից
- Քաղաքացիական հասարակության զարգացման աստիճանից
- Մարդու ճակատագրից (բախտից)
- Այլ \_\_\_\_\_

3. Որտե՞ղ եք տեսնում Ձեզ 5 տարի անց

ա. ՀՀ-ում

բ. ՀՀ-ից դուրս՝ նշեք, թե որ երկրում եք Ձեզ տեսնում.

---

4. Ի՞նչ գործունեության ոլորտում եք Ձեզ պատկերացնում այդ երկրում (ներառյալ ՀՀ): Ինչու՞ հենց այդ երկիրը:

---

---

---

---

---

*ՄԱՍ-II Ստորև ներկայացված հարցերը թույլ կտան բացահայտել ՀՀ-ում կյանքի որակով Ձեր բավարարվածության մակարդակը: Խնդրում ենք հարցերին պատասխանել հնարավորինս անկեղծ:*

1. Գնահատեք ՀՀ-ում Ձեր իրավական պաշտպանվածության աստիճանը (1-ը ամենացածր, 5-ը ամենաբարձր):

1 2 3 4 5

1.1 Որքանո՞վ է այն համապատասխանում Ձեր ցանկությանը, սպասումներին (1-ը բացարձակ չի համապատասխանում, 5-ը լիովին համապատասխանում է):

1 2 3 4 5

2. Գնահատեք ՀՀ-ում Ձեր կրթական բավարարվածության աստիճանը (1-ը ամենացածր, 5-ը ամենաբարձր):

1 2 3 4 5

2.1 Որքանո՞վ է այն համապատասխանում Ձեր ցանկությանը, սպասումներին (1-ը բացարձակ չի համապատասխանում, 5-ը լիովին համապատասխանում է):

1 2 3 4 5

3. Գնահատեք ՀՀ-ում Ձեր ֆինանսական ապահովվածության աստիճանը (1-ը ամենացածր, 5-ը ամենաբարձր):

1 2 3 4 5

3.1 Որքանո՞վ է այն համապատասխանում Ձեր ցանկությանը, սպասումներին (1-ը բացարձակ չի համապատասխանում, 5-ը լիովին համապատասխանում է):

1 2 3 4 5

4. Գնահատեք ՀՀ-ում Ձեր ներկայիս բարեկեցության աստիճանը (1-ը ամենացածր, 5-ը ամենաբարձր):

1 2 3 4 5

4.1 Որքանո՞վ է այն համապատասխանում Ձեր ցանկությանը, սպասումներին (1-ը բացարձակ չի համապատասխանում, 5-ը լիովին համապատասխանում է):

1 2 3 4 5

5. Գնահատեք ՀՀ-ում Ձեր աշխատանքային պայմաններով բավարարվածության աստիճանը (1-ը ամենացածր, 5-ը ամենաբարձր):

1 2 3 4 5

5.1 Որքանո՞վ է այն համապատասխանում Ձեր ցանկությանը, սպասումներին(1-ը բացարձակ չի համապատասխանում, 5-ը լիովին համապատասխանում է):

1 2 3 4 5

6. Գնահատեք ՀՀ-ում Ձեր կյանքի որակը ընդհանուր առմամբ (1-ը ամենացածր, 5-ը ամենաբարձր)

1 2 3 4 5

*ՄԱՍ-III Ստորև ներկայացված հարցերը ուղղված են բացահայտելու ՀՀ ներկայիս որդեգրած քաղաքականության վերաբերյալ Ձեր իրազեկվածությունը ու վերաբերմունքը: Խնդրում ենք հարցերին պատասխանել հնարավորինս անկեղծ:*

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում Եվրոպական Միությունը (ԵՄ): Նշեք հիմնական սկզբունքները, որոնց ծանոթ եք:

---

---

---

---

---

2. ՀՀ-ում Եվրոպական միության հետ ինտեգրմանն ուղղված ի՞նչ ծրագրեր են իրականացվել:

---

---

---

---

---

3. Ինչպիսի՞ միջոցառումներ են կազմակերպվում տարբեր քաղաքացիական ուժերի կողմից, որոնք նպաստում են Եվրոմիության սկզբունքների որդեգրմանը: Խնդրում ենք նշել, թե ինչպիսի՞ նախաձեռնությունների հետ եք ծանոթ (ՀԿ-ներ, քաղաքացիական այլ նախաձեռնություններ):

---

---

---

---

---

4. Ծանոթ եք արդյոք քաղաքացիական ուժերի կողմից կազմակերպվող միջոցառումներին, որոնք ուղղված են Եվրոմիության սկզբունքների որդեգրմանը:

ա. Այո

բ. Ոչ

4.1.Եթե այո, խնդրում են նշել թե ինչպիսի՞ նախաձեռնությունների հետ եք ծանոթ:

---



4.2 Այդ նախաձեռնություններին ծանոթ եմ, քանի որ

- Մասնակցել եմ անձամբ
  - Ես ինքս չեմ մասնակցել, բայց ընկերներս մասնակցել են
  - Լսել եմ ծանոթներից
  - Լսել եմ հեռուստատեսությամբ
  - Լսել եմ օնլայն մեդիա աղբյուրներից և սոցիալական ցանցերից
  - Այլ աղբյուրներից \_\_\_\_\_
5. Ինչպե՞ս եք տեսնում Ձեր ապագան, եթե Հայաստանը միանա Եվրոմիությանը:

---



---



---



---

6. Ի՞նչ է իրենից ներկայացնում Եվրասիական միությունը (Մաքսային Միություն): Նշեք հիմնական սկզբունքները, որոնց ծանոթ եք:

---



---



---



---

7. ՀՀ-ում Եվրասիական միության հետ ինտեգրմանն ուղղված ի՞նչ ծրագրեր են իրականացվել:

---



---



---



---

8. Ինչպիսի՞ միջոցառումներ են կազմակերպվում տարբեր քաղաքացիական ուժերի կողմից, որոնք նպաստում են Եվրասիական միության սկզբունքների որդեգրմանը: Խնդրում ենք նշել, թե ինչպիսի՞ նախաձեռնությունների հետ եք ծանոթ (ՀԿ-ներ, քաղաքացիական այլ նախաձեռնություններ):

---



---



---



---

9. Ծանոթ եք արդյոք քաղաքացիական ուժերի կողմից կազմակերպվող միջոցառումներին, որոնք ուղղված են Եվրասիական միության սկզբունքների որդեգրմանը:

ա. Այո

բ. Ոչ

9.1. Եթե այո, խնդրում են նշել թե ինչպիսի՞ նախաձեռնությունների հետ եք ծանոթ:

---



---



---

9.2 Այդ նախաձեռնություններին ծանոթ եմ, քանի որ

- Մասնակցել եմ անձամբ
- Ես ինքս չեմ մասնակցել, բայց ընկերներս մասնակցել են
- Լսել եմ ծանոթներից
- Լսել եմ հեռուստատեսությամբ
- Լսել եմ օնլայն մեդիա աղբյուրներից և սոցիալական ցանցերից
- Այլ աղբյուրներից \_\_\_\_\_

10. Ինչպե՞ս եք տեսնում Ձեր ապագան, եթե Հայաստանը միանա Եվրասիական միությանը:

---



---



---



---

11. Ելնելով երկրի տնտեսական նկատառումներից, հասարակական, քաղաքական պատրաստվածության մակարդակից, ո՞րն է առավել նպատակահարմար Հայաստանի համար, որ

ա. Միանա Եվրասիական միությանը    բ. միանա Եվրոմիությանը    գ. Մնա այնպես ինչպես կա

12. Ելնելով Ձեր նպատակների իրականացման համար հնարավոր պայմաններից, ո՞րն է առավել նպատակահարմար Ձեզ համար:

ա. Միանա Եվրասիական Միությանը    բ. միանա Եվրոմիությանը    գ. Մնա այնպես ինչպես կա

13. Ըստ Ձեզ ի՞նչ է առաջարկում Եվրոմիությունը ՀՀ-ին.

---



---



---



---

14. Ըստ Ձեզ ի՞նչ է առաջարկում Եվրասիական Միությունը ՀՀ-ին

---



---



---



---



---

15. Ձեր կարծիքով Եվրոպական միությանը միանալուց հետո ինչպե՞ս կփոխվի կյանքը ՀՀ-ում:

	Ֆինանսական բարելավում	Աշխատանքային պայմանների բարելավում	Կրթական համակարգի բարելավում	Իրավական պաշտպանվածություն	Ընտանեկան բավարավածություն	Առողջապահական համակարգի բարելավում
Կլավանա						
Կվատանա						
Կմնա նույնը						

16. Եվրասիական միությանը միանալուց հետո ինչպե՞ս կփոխվի կյանքը:

	Ֆինանսական բարելավում	Աշխատանքային պայմանների բարելավում	Կրթական համակարգի բարելավում	Իրավական պաշտպանվածություն	Ընտանեկան բավարավածություն	Առողջապահական համակարգի բարելավում
Կլավանա						
Կվատանա						
Կմնա նույնը						

17. Ըստ Ձեզ ինչպիսի՞նն է կառավարության որդեգրած քաղաքականությունը.

- ա. Տեսնում է երկիրը Եվրոմիության կազմում
- բ. Առավել սերտ համագործակցում է ԱՊՀ երկրների հետ
- գ. Չունի որևէ ուղղվածություն
- դ. Ճկուն <<խաղ>> է վարում երկու միությունների հետ:

18. Որպես ՀՀ քաղաքացի որքանո՞վ եք համաձայն այդպիսի քաղաքականության հետ (5-ը լիովին համաձայն եմ, 1-ը բոլորովին համաձայն չեմ):

1    2    3    4    5

19. Ունե՞ք դրսում ապրող բարեկամներ: Եթե այո, ապա որտե՞ղ:

---

**Անձնական տվյալներ**

- 1. Անուն, Ազգանուն \_\_\_\_\_
- 2. Տարիք \_\_\_\_\_
- 3. Բնակավայր \_\_\_\_\_
- 4. Կրթություն \_\_\_\_\_

- ա. Միջնակարգ
- բ. Լրիվ միջնակարգ
- 5. Խնդրում գ. Միջին մասնագիտական ենք նշել Ձեր
- դ. Բակալավր
- ե. Մագիստրատուրա
- զ. Այլ \_\_\_\_\_

զբաղվածությունը:

<ul style="list-style-type: none"> <li>ա. Աշխատում եմ</li> <li>բ. Սովորում եմ</li> <li>գ. Սովորում եմ և աշխատում գուգահեռ</li> <li>դ. Չեմ աշխատում</li> <li>ե. Աշխատում եմ այլ մասնագիտությամբ</li> </ul>
-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

- 6. Նշեք Ձեր եկամտի հիմնական աղբյուրը:
  - ա. Մասնագիտական աշխատանք
  - բ. Ծնողի կամ բարեկամների կողմից ֆինանսավորում
  - գ. Արտերկրից օգնություն
  - դ. Այլ
- 7. Ընտանեկան կարգավիճակը.
  - ա. Ամուսնացած եմ
  - բ. Ամուսնացած չեմ
- 8. Ինչպե՞ս կգնահատեք Ձեր ընտանիքի նյութական բարեկեցության մակարդակը.
  - ա. Անբավարար
  - բ. Միջինից ցածր
  - գ. Միջինից բարձր
  - դ. Միջին
  - ե. Բավարար
  - զ. Լիովին բավարար

**Շնորհակալություն**

*Հարցերի կամ արդյունքների ծանոթանալու համար  
 կարող եք գրել այս էլեկտրոնային հասցեներին  
[gohar.beybutyan@gmail.com](mailto:gohar.beybutyan@gmail.com)  
[aghajanyanrozi@gmail.com](mailto:aghajanyanrozi@gmail.com)*